ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ԿՈՒՈՒՆԿ

ՕՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ։

№ 3, ՅՈՒՆՎԱՐ և № 4, ՓԵՏՐՎԱՐ 1865:

Vereis amor dà patria, nào movido
de premio vil, mas alto e quasi eterno.

Դու կ'տեսնես հայրենիքի սէրը ոչ թէ չարժված անարդ չահասիրութենից, բայց բարձր եւ իբր յաւիտենական։ (1)

ԹԻՖԼԻՍ, *յունվարի* 1։

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Վերջանում հին տարին և սկսվում նորը. le roi est mort, vive le roi(2)։ *Յաւիտենականութեան ժամացոյցը կատարեց դարձեալ տարեկան ղարկը և այնով լմացրեց լսող ականջներ ունեցողներին, որ մի ամբողջ տարին նորից դլորվեցաւ դէպի վատ անդունդները։*

Իմաստունները շտապում են հաշիւ տալ իւրեանց թէ ինչ գործունէութեամբ նշանաւորելեն նոքա իւրեանց վիճակութիւնը աշխարհում դլորված տարու մէջ; անխմատները միամիտ, թանձրամիտ ժպիտով ընծայում են միմեանց քաղցրիղէններ.....

Ուրախալի օր է առ հասարակ նոր տարու օրը, որովհետև թէպէտ շատերը պնդում են, որ էապէս չկայ ոչինչ զգալի փոփոխութիւն նորանից, որ երկի 1864 թուի դեկտեմբերի 31 էր, իսկ այսօր 1865 թուի յունվարի 1, բայց այնու ամենայնիւ. և մենք, և դուք, ընթերցող, և ամենքեքեան, յունվարի այս 1-ից սկսում ենք չափել ժամանակի նոր մասը, որ չէ նկատում մեզ, բայց որ նկատում ենք մենք, պնդում ենք նշան և այնտեղից կ'գնանք

(1) կամօէնս «Os Lusiadas» երգ I եր. 10։

(2) Թագաւորը մեռաւ, կեցցէ թագաւոր։

հեռու, առաջ և առաջ .....

Ուրեմն շնորհաւոր նոր տարի, շնորհաւոր նոր ... բայց չէ, չենք շնորհաւորի «նոր բաղդ»: Մեր ընթերցողները անշուշտ կ'հարցնեն. ինչի շնորհաւորել և նոր բաղդ? Մեր ընթերցողներին գուցէ կ'երևի օտարոտի, նոքա այս գուցէ կ'համարեն անքաղաքավարութիւն կամ անբարեացակամութիւն մեր կողմից, որ մենք չենք կամենում ցանկանալ նորան նոր բաղդ: Այսպէս թէ այնպէս, բայց մենք չենք ցանկանում նոր տարուհետ և նոր բաղդը: Սորա համար մենք ունինք մեր պատճառներ, որոնց մի մասը կ'աշխատենք մեկնելու կարելութեան չափ:

Գլխաւորապէս մենք բոլորովին չենք ցանկանում, որ Հայերը իւրեանց յոյսը դնեն բաղդի վերա, որի վերա նոքա մինչև այժմ չափազանց յուսադիր են եղել; մենք ցանկանում ենք, որ Հայերի կեանքի մէջ բաղդի տարրը մնայէր ամենափոքր մասով, որ նոքա պատուեն, և ոչ թէ սպասեն բարեյաջողութիւնը; այսօր բաղդ, վաղիւ բաղդ, հարկաւորէ մի օր փոքր մի և խելք: Հարկաւորէ խոստովանել, որ մինչև այժմ մենք չունինք իրաւունք այսպէս ասելու: Մենք միշտ և բոլորովին ապրեցնենք բաղդով, իսկ սա իւր ձախ կողմերով միայն ակնարկելէ դէպի Հայերը; մենք ոչինչ, կամ գրեթէ ոչինչ չենք արել, մեր բարեյաջողութիւնը կարգելու համար: Մենք յուսացնելենք, ցանկացնելենք, սպասելենք, բայց երբէք չենք կամեցել և այդ պատճառով շատ յաճախ խաբվելենք մեր յոյսերի, ցանկութիւնների և ակնկալութիւնների մէջ: Մենք ամենայն պատրաստութեամբ դիմելենք դէպի շատը բայց չենք յոյցուվել ոչինչ պատրաստութիւն ներգործելու փոքր ստանալու համար գոնէ: Մենք շատ հեշտ և շուտ պատրաստենք ամենին համակրելու, բայց շատ ծոյլենք աշխատակից լինելու; բայց այս դեռ փոքր է, մենք այնքան սիրելենք հանգստութիւն, որ աւելի յաճախ տրտնջումենք նոցա վերա, որոնց մէջ նկատումենք գործունէութեան ցանկութիւնը և փորձը, և առանձին չարութեամբ ծափահարումենք նոցա անյաջողութիւններին, մոռանալով բոլորովին անխմաստաբար, որ չէ սխալվում միայն նա, որը, ինչպէս դէպքերի բոլոր մեծ մասը, ոչինչ չէ շինում: Այս խոստովանել իհարկէ այնքան ուրախալի չէ; լսել

այս տեսակ ճշմարտութիւնը վիրաւորանք է, որովհետև սա, ինչպէս ամեն ճշմարտութիւն, խոցում է սիրտը; բայց ինչ անել, երբ այս իսկապէս ճշմարտութիւն է, երբ Հայերը իսկապէս սիրում են ապրել, ձեռները լաչաճ, առանց հոգալու բոլորովին իւրեանց բարոյական առաջադիմութեան մասին: Միթէ օգտուէտ կ'լինէր, եթէ մենք սկսէինք հիանալ մեր անգործունէութեան կամ շարժել ինքնասիրութիւնը անարժան նենգութեամբ, թէ ահա մենք ինչպիսի գործունեա մարդիկ ենք, մենք կարողացանք բոլորին հասնել և ստանալ? Մենք կարծում ենք, մենք գիտենք, մենք հաւատացած ենք, որ այդ տեսակ անարժան նենգութիւնը հասարակութեան առաջ ազնիւ ներգործողի կողմից արժանալու չէր գովեսին, և շուտ թէ ուշ անարժան նենգաւորը, ժողովուրդի սէրը նենգութեամբ պատռող խաբեբան կ'բռնվէր գիմակի մէջ և գիմակազուրկը պատժված կ'մնար այնուհետև արժանապէս, ժառանգելով ընդհանուր արհամարհանքը:

Ուրեմն թողնելով բաղդը, հարկաւորէ միայն մտածել և ներգործել ազնւաբար, ներգործել և մտածել ազնւաբար. միտքը ծնում է գործ, գործը ծնում է միտք: Մեր հետ կարող չէ համաձայնվել միայն նա, որի սուտ ազգասիրութիւնը չէ կամենում լսանալ ոչինչ աւելի բայ ի կոյր հաւատից դէպի հայկական աստղը: Sapienti sat! խնամատուն է բաւական է:

Ս. ՍՏԵՓԱՆԷ:

ԿՐՕՆԸ

ամենօրեա կեանքի գործերի մէջ (1):

—

Ամենօրեա կեանքի գործերը միացնել կրօնի հետ, գործունեա և պարապած կեանքի դբաղման և շփոթի մէջ պահպանել ճշմարիտ բարեպաշտութեան զգացումը—է անկասկած ամենադժվար պարտականութիւններից մին, որ պարտականէ

---

(1) Այս յօդվածը հանվածէ Ջոն Կերրի ճառից, որ ասվեցաւ Անգլիայի մէջ վիկտօրիա թագուհու ներկայութեամբ; այս ճառը այնպիսի ներգործութիւն ունեցաւ, որ նոյնժամ առաջարկվեցաւ թագուհու

*կատարել քրիստոնեան, նորա վերա պրված խնդիրների համար աշխարհիս մէջ: Համեմատաբար ասելի հեշտ է լինել նկնղեցւոյ մէջ բարեպաշտ, ամիսվիճ մարքերը, սանձել զգայմունքը և ներիս լինել առերես չկրմեռանդութեամբ նկնղեցական ազատութեան ժամանակ, ուրախ հանգստութեան և աղօթքի տան լռութեան ժամանակ: Բայց լինել բարեպաշտ աշխարհի մէջ, լինել բարեպաշտ և արդար—ծառայութեան մէջ, կնհատրի մէջ, գործարանի մէջ, վաճառատեղում, դաշտի մէջ, պահպանել բարի զգայմունքը և բարձր մարքերը ամբոխի և ամենօրեայ կեանքի մրրիկների մէջ— ահա մեծ դժվարութիւն քրիստոնէի կոչման մէջ: Իւրաքանչիւր ոք անվիջապէս կատարելով կրոնի նշանաւոր և սրբազան պարտականութիւնները, և հարիւր հանգստանում հիրքերից և շատ թէ փոքր զգուշ իւրան բարձր ստացութիւնների ազդեցութեան տակ; բայց ընտանեկան կեանքի, հասարակական ծառայութեան տեղն, մագաղինի, փողոցի, և աղմկալի քաղաքի առանձին (եթերը) նոցա ամենօրեայ պարապմունքով, հոգսերով և անդադար աշխատանքով, շատ հեռու է և աննման տաճարի առանձին:

անուանով Կիրղին տարածել նորան տպագրութեամբ—որպէս մի հեղինակութիւն բոլորովին արժանի հասարակական ուշադրութեան: Տպված ճառը տարածվեցաւ Անգլիայի մէջ ամենամեծ միջոցով քանի մի տաս հազար հատորներով:

Այս տեսիլ հեղինակին հնարը ոչ միայն չինել, բայց և յաւետեան ապահովացնել մեծ ուսումնարան նորա թեմուած Պերս կոմսութեան մէջ. Այս ճառը թարգմանված է և ղերմաներէն և հրատարակված Բոնղէնի, յայտնի ղերմանացի ուսումնականի աչխատութեամբ: Թարգմանութիւնը շատ յաջողվեցաւ: Բոնղէնը թարգմանութեան առաջաբանում առումէ. «Թարգմանութիւնս ճիշդ է, բայց ղերմանական; հարկաւորէր թարգմանութեան հետ ապել և անգլիական բնագիրը»: Այսպիսի ահա խնամատուն յարաբերութիւնը ղեպի դաղափարական հեղինակութիւններ: Մեր թարգմանութեան մէջ, կարելութեան չափ, պահպանված են բնագրի խնամսը և դօրութիւնը: Ձառի առարկան չէ բովանդակում իւր մէջ ոչինչ բացառական, օտար կրօնադաւանական հայեցքներ: Համաձայնվումնք կարծել, որ առաջարկված յօդվածը սիրո օդուտով կարդան հայկական ընթերցողներ: Հայերը սիրո կարդան և կրկին և կրկին կարդան յօդվածս, ...

Խմբագ."

Անցնել մինչ դէպի մեռը — միևնոյն է թէ ենթարկիլ յաւերժական անպատճառութեան տրօպիկական կլիմային, արեգակի ջերմ ճառագայթից դէպի միջատատ մառախուղը, բայց առանց կենդանարար տաքութենից դէպի սառնութիւնը: Պահպանել կրօնական զգացմունքի և կանոնների ըստութիւնը և հաստատութիւնը, երբ մենք դուրս ենք գալիս տաճարից և կրկին մտնում ենք աշխարհ, երբեմն թվում է նոյնքան դժվար, որքան դժվար է պահպանել ամրողջութիւնը մի օտարերկրեայ տունկը, երբ նա ենթարկվածէ ձմեռի սառնութեան, կամ թէ պահպանել ճրագի լոյսը վառ, երբ նա դուրս բերված քամու մէջ:

Այս դժվարութիւնը թվում միշտ այնպէս մեծ, այնպէս անյաղթելի, որ սահմանները միայն փորձութիւնն անկեղծօրէն և վճռապէս դործդնել փորը չանք նորան յաղթելու համար: Իսկ մեծ մասը այսպէս թէ այնպէս գանգէ անում բարի և բարեպաշտ լինելու խիստ ընդհրը, թէ եկեղեցու և թէ աշխարհի մէջ: Առաջնան ժամանակում, օրինակի համար, շատ բարեպաշտ մարդիկներ, որոնք պատրաստվելիս խորին կերպով յանձնական կեանքի և դէպի նա պատրաստվելու կարևորութեան մասին, բայց վախենալով առաջիկա չանքերից, որոնք անհրաժեշտն կրօնական պարտականութիւնները կատարելու համար ամենօրեա կեանքի հոգսերի և փորձութիւնների մէջ, մեծ մասով թողնում էին աշխարհ, հաստատակութիւն և ամենայն հաստատականան կոչմունք և առանձնանում էին մի անապատի մէջ մի հանդիստ և հեռաւոր ապաստանարան, ուր «մեռանողի աշխարհը և մռռացված աշխարհից», նպատ կարողանում էին անարգելապէս նվիրել իւրեանց անձը բարեպաշտութեան և հաւատին: Մեր ժամանակում կրօնի և աշխարհի մէջ պատեբապի համար առնել դործնական եղանակը շատ նման չէ այն եղանակին, որ ընտրում էին առանձնակեացները և բողբոջվին այնպան ճիշդ չէ: Չունենալով քաջութիւն աշխարհիս բարիքներից հեռանալու և նմանապէս չցանկանալով կորցնել ապագա կեանքի երջանկութեան բոլոր իրաւունքը, շատ մարդիկներ իւրեանց հետ մի կերպ դաշն են դնում, որի ըստութեամբ նորա վարվում են կրօնի և աշխարհի հետ, մինչպէս

երկու պարտաւորութիւնների հետ, որոնց պահանջմունքը չէ կարելի կատարել միևնոյն ժամանակում և նոցանից իւրաքանչիւրին նվիրուելն իւրաքանչիւր ժամանակի և իւրաքանչիւր մտքերի իհարկէ անչափահաս (անհամեմատ) մասը:

«Ամեն գործ ունի իւր ժամանակ—այդ պիսի է այս մարդկանների անբարբառ դատողութիւնը—«աղօթքը, քարոզները, բարեպաշտ ընթերցանութիւնը, և» հապա նոքա համարձակվում են աւելացնել «Աստուծոյն ծառայութիւնը» — «այս բոլորը միասին վերաբերվում է միայն, ասվին, իսկ երեքշաբթի ճնշած օրերը պատկանում են կեանքի գործնական և ամենօրեա գործերին; բաւականէ այն, եթէ ասվը մենք նվիրուենք մեր կրօնական պարտականութիւնների կատարման; չէ կարելի արդէն անպատճառ աղօթել և կարդալ Աստուածաշունչը; թող եկեղեցու պաշտօնեաները, և անգործ մարդիկները պարապեն կրօնով համբոյջ շաբաթ; նոքա ունեն կարողութիւն, բայց մենք այդ չենք կարող, մենք ունինք մեր բազմաթիւ նշանաւոր գործերը»:

Եւ դուրս է գալիս այն, որ կրօնից շինուում են մի ասնական իր, ինչպէս հագուստ, որ չափազանց զարդարվածէ ամենօր հագնելու համար, որ հանդիսապէս հագնուում են նշանաւոր դէպքերում և շուտով պահուում են, երբ անցնում է նշանաւոր դէպքը: կրօնը, ինչպէս մի անմահանակից նկատողը գրաւված ամբոխի մէջ, թողնուում են մի կողմ ամենօրեա գործունէութեան ժամին, իբր թէ արդարև նա ոչինչ գործ չունի այսպէս մահկանից լինելու: Ինչպէս անհաճոյ, բայց կարևոր դեղը, նորան հաճոյապէս ընդունում են երբեմն հոգևկան առողջութիւնը պահպանելու համար; բայց չեն կարողանում չեն կամենում շինել նորանից ամենօրեա գործածական դեղ, հասկան և կեանք պնդացնող կերակուր: Բայց կրօնի միտքը, որ արտայայտվածէ Աստուածային բանով, բոլորովին զանազան է այդ տեսակ հասկացողութիւններից: Նորա մէջ պարունակվում է այն միտքը, որ այս կեանքի գործերի վերա դրձված ամենաջերմեռանդ ուշադրութիւնը չէկարող հակառակ լինել անկեղծ և ջերմեռանդ բարեպաշտութեան, որը պահանջվում է Աստուծուն ծառայութեան մէջ: «Եղիք ջանասէր գործերի մէջ և ջերմեռանդ հոգով ծառայելով Աստուծուն»: Ահա այն խոսքեր,

որոնք ասկետն հասկանալ որ կրօնը է ոչ այնքան առանձին պարտականութիւն, որքան գործ, որ վերաբերվում է բոլոր մեր պարտականութիւններին,—որ նա չէ մի հարկ, որ հարկաւորէ վճարել իւր ժամանակում և որից ազատվում է հատուցման ժամանակների միջոցներում, բայց անդադար, անդադարելի և դլխաւորագոյն հարկ դէպի Նա, Որ է ոչ միայն կրօնական և քրիստոնեան առարկայ, բայց և բոլոր մեր կեանքի և մեր բոլոր լինելութեան նպատակ: Որևիցե բարեպաշտութիւնը միայն մի շաբաթական կամ տօնական օրերի համար չէ, բայց ամեն օրերի;—կրօնական կեանքը յարմարեցրված չէ միայն գործողութիւնների նշանակված կարգին, իսկ միւսներին իբրեթէ հակառակ կամ անհամեմատ, բայց ինչպէս ընդհանութիւնը, ինչպէս արևնի շրջանակումը, ինչպէս մարմնի գործարանների աճումը, նա է ինքնագոյ, հաստատուն, որ կարողէ կատարվել միևնոյն ժամանակում մեր բոլոր գործողութիւնների հետ, ամենանշանաւոր պարապմունքի ժամանակ և կատարեալ անգործութեան մէջ,—եկեղեցւոյ և աշխարհի մէջ,—առանձնութեան և հասարակութեան մէջ,—մեր ուրախութիւնների և տխրութիւնների մէջ,—քնի և հսկման ժամանակ,—դիշեր և ցերեկ, կեանքի բոլոր հոգսերի և և աշխոյժութիւնների մէջ:

Աշխատանք մեկնել և ապացուցանել այս միտքը, կրօնի անհատականութեան կամ միաբանութեան միտքը ամենօրեայ կեանքի պարապմունքի հետ:

Անհրաժեշտ կարևորութիւն չկայ իւրաքանչիւրի համար թողնել աշխարհը, թողնել իւր պարապմունքը, Աստուծուն աւելի մօտ լինելու համար; ամենահասարակ գործողութեան ամենահասարակ շրջանը, ամենահասարակ աշխատութիւնը կարողէն մեզ հասցնել այն բոլորը, ինչոր մենք պիտի պատենք որպէս քրիստոնեաներ,—մեզ գտնելու պատահումը, ճանապարհը, որ մտեցնէր մեզ ամենայն օր դէպի մեր Աստուած: Իհարկէ, եթէ մենք չունենայինք ոչինչ հնար յաւիտենական կեանքի համար պատրաստվելու, եթէ ոչ թողնելով այս աշխարհի բոլոր գործերը և հոգսերը; ապա կրօնի օգուտները (հնարեւորները) այնպէս նշանաւորին, որ ոչ մի խոհեմ մարդը չպիտի տարակուսէր այս գործերը յանձնառնելու մա-

պին: Կեանքը դադարի դէպի այս կողմում — և մի վայրկեան, իսկ դէպի այն կողմում — յաւիտենականութիւն: Եւ մենք գիտենք շատ արժան գընած կ'լինէինք երջանկութեան յաւիտենականութիւնը միանակիսութեան, ղրկանքի և աշխատութեան վաղանցուկ կեանքի փոխարէն; իսկ այս աշխարհի գործերի վերայ դրված մեր անդադար աշխատանքի հետեւանքները (համարելով նաեւ, որ նոքա կարողէին տալահովացնել մեզ ժամանակաւոր ցանկութիւններին ամենատեսակ բաւականութիւնները) գընված կ'լին չափազանց քանկ գնով, եթէ նոքա խոչընդոտ յաւիտենական լինէին մեղանից եզական ժամանակը, որով մենք կարողէինք պատրաստվել Աստուծուն մերձենալու համար: Ա.յսպէս եթէ մենք ոչինչ հնար չունենայինք կենցաղական գործերը կրօնի հետ համաձայնեցնելու, ապա թողնել մի կողմ այս բոլոր գործերը և անձնատուր լինել բարեպաշտութեան — լինելու էր իւրաքանչիւրիս համար զգուշութեան և խնայողութեան գործ: Ա.յն ժամանակ պարտականութիւն կ'լինէր արհեստագործի, վաճառականի, տիրութենական պաշտօնեայի ուսումնականի, և ամեն կոչման մարդկերի համար թողնել անյապաղ արվեստարանը, կօնտօրը, կամերգրան, աշխատանոցը — նոցա աշխատութեան ճանօթ տեղերը, որ շինեն իւրեանց կեանքը անդադար ուռն, և նվիրեն իւրեանց ամբողջապէս անընդելի ազօթքին, անդադար բարեպաշտական նկատողութեան և մարտնչողութեան: Բայց այսպիսի զոհարերութեան անկարելութիւնը ապացուցանում է, որ այս տեսակ զոհը չէ պահանջվում: Նա, որ կառավարում է աշխարհը, չէ նշանակում մեզ անկարելի աշխատութիւն: Տեսական աշխարհի մէջ չկան այնպիսի օրէնքներ, որոնք հակառակ էին միմեանց, և մենք կարողենք հաւատացած լինել, որ և բարոյական աշխարհի մէջ չկան երկու օրէնքներ այնքան զանազան, որ նոցանից մին պիտի անշուշտ զանց արված լիներ միւսի կատարման ժամանակ:

Բայց յայտնի է, որ աշխատութեան օրէնքը գնվում է բարոյական աշխարհի մէջ: Աշխատութիւնը, որ ամեն ժամանակ պարտականութիւն է, միքանի հանգամանքների մէջ դառնում է կարևորութիւն: Արարիչը կարողեր մեզ ազատ ստեղ

ծիլ աշխատանքից, նա կարողէր կերակրել մարդին, ինչպէս կե-
րակրում երկնքի թռչուններին և դաշտի շուշանը, որոնք
ոչ աշխատում են և ոչ մանում են»; նա կարողէր ուղարկել կե-
րակուր մեզ ամենօր երկնքից, ինչպէս երբեմն ուղարկում էր
մանանա, կամ կարողէր հրամայել բնութեան պատրաստել այն
առաջորդով, և մեր ձեռներին հարկաւոր չէր լինի երկիրը պըտ-
ղաբեր անելու; նա կարողէր այս կերպով հեռու տալ մեզ բո-
լորովին նվիրվելու աստուածապաշտական կեանքին: Բայց որով-
հետև նա ստեղծելէ մեզ այնպէս, որ եթէ մարդս չաշխա-
տէր մի օր անգամ, կեանքի բոլոր գործարանները կանդնելուէին
յանկարծ, նմանապէս և դիտութիւնները, լուսաւորութիւնը,
հասարակական առաջադիմութիւնը, միևնոյնով այն բոլորը, ինչ
տանում դէպի բարեբաղդութիւն ներկա կեանքի մէջ; սորա-
նից մենք կարողենք եզրակացնել, թէ կրօնը, որ նմանապէս
բարութիւն է, և յիրաւի բարձրագոյն, էականագոյն բարի մար-
դի համար, չէ կարող լինել հակառակ, անմիտանակից աշ-
խատութեան հետ: Հարկաւոր չէ արդեօք ասել աւելի, թէ բոլոր
ջանքը, որը գործենք դնում մենք մեր ֆիզիկական կարիքների
բաւականութեան համար, թէ այս մեր հոգսերը ապահովա-
ցու գործերի մասին, զմասլոա Աստուծու դիտաւորութեամբ,
դեռ օգնութիւն են կազմում կրօնական կեանքի համար? Ծա-
մացոյցների ճօճանակը ըստ երևոյթին ժամացոյցի քնքոյշ կա-
ղմվածի համար չափազանց ծանր է, բայց նա ոչ միայն չէ կան-
գնեցնում նոցա ընթացքը և չէ արգելում նոցա կազմվածին,
նա անհրաժեշտ կարևորէ նոցա ամրութեան, հաւասարա-
կշռութեան և ուղղութեան համար: Մի այս տեսակ ինչ ալի-
սի լինի այն ներդործութեան մէջ, որ ունի նիւթական աշ-
խատութիւնը, շատ անգամ անչափ խիստ և ստոսիկ—մարդի
բարոյական կեանքի քնքոյշ կազմութեան վերա:

Երկնային մոլորակները կատարումեն երկու կերպ շրջաններ
մին—իւրեանց շրջանների մէջ, և երկրորդ—իւրեանց առանցքի
շուրջ; բայց մին միւսին բոլորովին չէ արգելում և երկոքեան
կատարեալումեն միևնոյն ժամանակում: Միևնոյնը կատարվումէ
մարդի երկու գործունէութիւնների մասին. նոքա կատարվե-
մեն իւրեանց հակառակադիր կենդրոնների շուրջ, որոնցից մին

է երկնքում միւսը—երկրիս վերա, չվելասելով և չխափանելով միմեանց միւսին: Նա, ով ուշի ուշով կատարում է իւր երկրային պարտականութիւնները, պարտական կատարել միևնոյն ուշադրութեամբ և միևնոյն ժամանակում այն պարտականութիւնները, որ դնում է նորա վերա կրօնը, նա պարտական է միևնոյն ժամանակում լինել. «Ջանասիրո դործերի մէջ և հոգով ջերմեռանդ, Տառապելով Աստուծուն»: Ինչ ենք հասկանում մենք «կրօն» ասելով? Կրօնը կարելի է քննել երկու զանազան կողմից: — Սա է ուսում և դործ, ուրիշ բառերով, սա է այնպիսի ճշմարտութիւնների սիստեմ (կարգ) որոնց պէտք հաւատալ և այնպիսի պարտականութիւնների հաւաքումը, որոնց պէտք կատարել: Որ կողմից և լինի քննեցէք, այն կէսը, որ մենք պաշտպանում ենք, կարողէ տպաւորացնել առանց դժուարութեան:

Քննենք կրօնը, ինչպէս ուսում, իբրպէս ճշմարտութիւն, որը պէտք հասկանալ և որին պէտք հաւատալ: Եթէ կրօնական ճշմարտութիւնը նման լինէր ուրիշ տեսակ շատ ճշմարտութիւններին, որոնց ուսումնասիրութիւնը պահանջում է ոչ միայն առանձին ընդունակութիւններ, այլ և կրթութեան ամեն օգնութիւններ, դրքեր, և ուսումնական պարապմունք, և այլն, այն ժամանակ իհարկէ կրօնի միութիւնը, կեանքի կարևոր պարապմունքի հետ կ'լինէր անկարելի մարդիկների բաղմութեան համար:

Այս միջոցին շատերին ներելի կ'լինէր ասել «իմ վիճակը այս կեանքի մէջ անհրաժեշտ կազմվածէ աշխատութենից, հոգսերից և անդադար պարապմունքից; իմ իւրաքանչիւր օրը, իմ իւրաքանչիւր ժամը անելանելի կերպով խառնվածէ և կաշկանդվածէ դործերի ուռկանով; ուրեմն ինչպէս կարողեմ ես նվիրել իմ անձը այս բարձր և մտածական գիտութեան? Այդ միջոցին իհարկէ Աստուածը լինելու էր Աստուած,—այսինքն բարի աստուած, որ ուղարկվածէ երկնքից երկնային Սէրի և Գթութեան կողմից Անքայութենից մեղքով վրկվածը բոլոր մարդկային ցեղին; բայց Աստուածը կ'լինէր Աստուած ուսումնականների համար, Աստուածը կ'լինէր կրօն հասկանալի, հին փիլիսոփայութիւնների նման, միայն սակաւաթիւ մարդիկներից այնչափ լուսաւորվածներին, որ կարողանային

հասկանալ նորա ուսումը, և այնչափ ազատներին գործնական պարապմունքից, որ կարողանային նվիրել իւրեանց նորա կանոններն մեկնութեան և քննութեան: Բայց Աւետարանը վերին իմացական ճշմարտութիւններն սիստեմ կամ դասաւորութիւն չէ: Նորանով առաջարկված փրկութիւնը չէ միայն մի բարձր խելքի վարձ, բայց ամեն հեզև խոնարհ սրտի: Նորա մեծ ճշմարտութիւններին հարկաւորէ սուրբ անարատութեամբ լցուած սիրտը:

Նորա լոյսը լուսաւորումէ առաւել պայծառ փայլմամբ ոչ թէ այն կեանքը, որ անշինեթէ գործերով, բայց այնպիսի հոգին, որ չէ խաւարված մեղքով: Փրկիչ Քրիստոսի կրօնը միևնոյն ժամանակում, երբ նա տալիս է ընդարձակ ասպարէզ աւելաբարձր մտքին նորա բարերար ճշմարտութիւնները նկատելու և ուսումնասիրելու համար, հասկանալի է նմանապէս ամենախոնարհ մտքի համար իւր դիւրաւոր կանոնների և իւր ուսման դերազանց պարզութեամբ: Ինչպիսի տգէտ և յիմար և միևնոյն ժամանակ կոպիտացած աշխատանքից, միայն թէ պահպանած լիներ իւր մէջ այնքան առողջ խմաստը, որ կարողանար վարել իւր ամենօրեա սովորական գործերը— այս բաւականէ փրկութեան ճանապարհը հասկանալու համար: Քրիստոսի մէջ յայտնված ճշմարտութիւնը, թէև մի կողմից այնքան խոր է, որ հրեշտակապետի բարձր միտքը կ'խառնվէր նորա խորախորհուրդ անդունդները նկատելու մէջ, բայց միւս կողմից այնքան պարզէ և հասարակ, որ և փոքր մանուկը, որ պատրաստումէ իւր մոր գոգում, կարողէ հեշտ ղդալ նորա կեանքը և պօրութիւնը:

Եթէ քննենք կրօնը, որպէս գործ կամ արհեստ, ապա և այս կողմից հեշտ կարելիէ նկատել նորա միակցութիւնը գործնական և ղբաղված կեանքի հետ; որովհետև կրօնի գործը պահպանվումէ աշխարհիս արհեստներից այն մտքով, որ նա կարողէ կատարված լինել բոլոր արհեստների, բոլոր պարապմունքի և բոլոր աշխատութիւնների հետ միասին, որոնց հնարկվածէ մեր կեանքը:

Տէրութենական մարդը, վէնտորը, օրէնսդէտը, բժիշկը, բանաստեղծը, նկարիչը, վաճառականը, շինականը կարողէն միև-

նոյն ժամանակուայ, երբ կատարուածն իւրեանց գանազան կա-
չեանն պարտականութիւնները, կատարել նմանապէս այն պար-
տականութիւնները, որոնք դրուածն նոցա վերա առաւել մեծ
և ազնիւ կոչմամբ, վարժուիլ քրիստոնեայի արհեստի մէջ:

Սովորական արհեստները պահանջուածն առհասարակ նորա
կողմից, որը կամենուայ հասնել կատարելութեան յայնմի առ-
ուճականին, նորա ժամանակի, աշխատութեան և մարքերի գրե-
թէ բացառական պըհաբերութիւնը: Ամենահարուստ տալանտը
հազիւ կարողէ հասնել կատարելութեան միքանի արհեստների
մէջ; իսկ մեծ մասի համար նոցա եղական արհեստը այնէ, որ
ապահովացնուածն նոցա ամենօրեայ հացը: Պահանջեցէք չբա-
ւոր արուեստաւորից կամ շինականից, որի իւրաքանչիւր ժամը
պարապածէ անդադար պատերազմով, որ կարողանայ նա վաս-
տակել անհրաժեշտ կարեւորը իւր և իւր ընտանիքի անունդի
համար, պահանջեցէք նորանից, որ նա ցոյց տայ արագ առա-
ջադիմութիւն բժիշկի, օրէնսդէտի, և փորագրողի արհեստի
մէջ, — և դուք կ'պահանջէք նորանից անկարելին:

Եթէ կրօնը լինէր այս արհեստներից մին, ապա շատ սա-
կաւ մարդիկ կարողէին ուսուցնուածիրով նորան և այս երկու
պատուերները «եղիք աշխատասէր դործերի մէջ և հոգով ջեր-
մեռանդ ծառայելով Աստուծուն» պիտի խանգարէին մին միւսին:

Բայց կրօնը ուրիշ տեսակ արհեստ է, որովհետև սա ար-
հեստ է բարի, ազնիւ լինելու և բարի դոր-
ծելու:

Նորա պաշտօնեա լինելու համար հարկաւորէ լինել իրաւա-
խոհ, արդար, անձնազոհ, պարզասիրտ, հեզ, ազնիւ, ներողամիտ և
անարատ խօսքերի, գործերի և մտքերի մէջ: Եւ այն տեղը,
ուր վարժուիլն այս արհեստով, մի առաձին բացառական,
ամենեցուն անմատչելի ուսուցնարան չէ, որտեղ սովորեցնուածն,
և որտեղից աշակերտները, բաւական ուսում ստացած, ար-
ձակուածն աշխարհի մէջ մտնելու, — բայց այն տեղը աշխարհս
է իւր բոլոր հոգսերով, փորձանքներով, նախանձով և հա-
կառակորդութիւններով, պատասխրութիւններով և անդադար
անվերջ փորձութիւններով, որոնց ենթարկուածն մարդի բնաւո-
րութիւնը և մարմնակազմութիւնը (տեմպերամենտ): Ուրեմն

սա այնպիսի արհեստ է, որով կարողն ամենեքեան վարժվիլ և որին տալով ազատութիւն նաև ամենադժվար կոչումը : Ա.յն, ինչ որ մարդս ստանում է աղօթքի, բարեպաշտ ընթերցանութեան, մտածութեան, եկեղեցական աստուածպաշտութեան և քարոզի միջնորդութեամբ, որոնք անհրաժեշտ կարևոր են կրօնին,—այս բոլորը նա պարտականէ անցկացնել, փոխել դէպի կեանքը, յայտնել իւր գործունէութեան մէջ, արդարացնել իւր ունեցած յարաբերութիւնների մէջ դէպի ընկերներ : Եկեղեցին հաւատի ուսումնարան է և քրիստոնէական կեանքի դուռը, իսկ աշխարհս քրիստոնէութեան փորձական վարժման տեղէ, քրիստոնէութեան պրակտիկական գործադրութեան տեղ : Նա, ով չէ եղել ծովի մէջ, չէ կարող լաւ նաւավար լինել, թէև կարողէ ուսումնասիրել, ուսանել նաւավարութեան տեսութիւնը (տէօրիա) : Նա չէ կարող լինել քաջ դիւնւոր, ով իւր սենեակի մէջ կարդում է պատերազմական վարժութեան գրքերը. նա պիտի ստանայ իսկապէս ծառայութեան մէջ, սառնասրտութեան, քաջութեան, կանոնապահութեան, հնարագիտութեան և արագ կշռադատութեան սովորութիւնը, առանց որոնց պատերազմական տեսական գիտութեան մէջ ամենագիտունը կ'լինի այնուամենայնիւ վատ դիւնւոր : Ա.յսպէս և քրիստոսի զինւոր առաւել յարմար և ճիշտ կերպով պիտի դառնայ մարդս ինքնանզովութեան, փորձանքին ընդդիմակացութեան, բարութեան, հեզութեան, խոնարհութեան, սէրի և բարեգործութեան կենսական փորձերով, որոնք ստացվում են ամենօրեայ հաղորդակցութեամբ մարդկների հետ :

Մի՛ ասէք ուրեմն, թէ գործունեայ մարդը, աշխատասէրը վաճառականը, աշխատանքով ծանրացած մշակը, չունին ժամանակ կրօնով պարապելու : Ուրիշ կերպով միւնոյն էր ասել, թէ ղեկավարը քամու և փոթորիկի ժամանակում, ժամանակ չունի նաւավարութեան վերա մտածելու, կամ թէ զօրավարը չէ կարող կշռադատել պատերազմական ներգործութիւնները պատերազմական դաշտի մէջ ! Ուրեմն որտեղ պիտի պարապին նոքա իւրեանց արհեստով ?

Կրօնը չէ կայանում միայն նորանից, որ մարդիկ նվիրեն իւրեանց հոգեշահ գրքերի ընթերցանութեան, չէ կայանում

նաև բարեպաշտութենից, նկատողութենից և աստուածասէր պարապմունքից — որոնք այսօր ամենայնիւ հարկաւորն, և առանց որոնց ոչ մի մարդ չէ կարող բարեպաշտ լինել — բայց կրկնուելիս պարձեալ, կրօնը կայանում է սուրբ Աստուածուն փառաբանելուց այս աշխարհի պարտականութիւնների և վորձանքների մէջ, — նոյն այս պարտականութիւնները կատարելուց, կրօնի նոյնպիսի ցոյցովութեամբ, ինչպէս անսխալ ցոյցէ տալիս կողմնացոյցը մրրկալի քամիների և ուխտադրուժ վորձանքների մէջ — վերջապէս կրօնը կայանում նորանից, որ կեանքի պատերազմի մէջ մենք պահենք մեզ քաջութեամբ և իմաստութեամբ Քրիստոսի, մեր Աստուածային Ուսուցչի (վարդապետի) փառքի համար: Հեռացնենք ուրեմն այն միտքը, որպէս թէ ևկեղեցու սպասաւորներ միայն և աղօթասէր մարդիկ կարողն լինել բարեպաշտ, և թէ կրօնական կեանքը անկարելի է հոգսերի և աշխատութեան աշխարհիս մէջ:

Հարկաւորէ ասել աւելի, — կեանքն է իսկական, ճշմարիտ ապրելիք, ուր կարելի է անկասկած ապացուցանել, որ բարեպաշտութիւնը միայն տօնական օրերի և առանձնութեան ժամերի գործ չէ, — որ նա կարողէ լինել ամեն օրի և ամեն ժամի գործ, կարողէ ընդգիմանալ աշխարհիս ամենաճանր դժբդմունքին, ամենադժվար պատերազմներին և ամենակոշտ պատահմունքին:

(Շարունակութիւն միւս անգամ):

ԼԵՒՈՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐ։

պատմաբանական դրամա երեք գործողութեամբ և հինգ բաժանմամբ։

Բաժանումն I Սպասաւոր և Գերի։
Բաժանումն II Գերեզմանափոր։
Բաժանումն III Տաճեր (локоны)։
Բաժանումն IV Դադար։
Բաժանումն V Բանտ և Թագ։

ՆԵՐԳՈՐԾՈՂ ԱՆՁՆԵՐ։

1) ԼԵՒՈՆ ԱՌԱՋԻՆ, *Յոյների գերի, Ամասիոյ մէջ։*
2) ԽՈՐՀՐԴԱՊԵՏ *յաւնական Ծերակոյտի։*
3) ԼԷՕՆՕՐԱ ԱԴԶԻՐՕՊՕԼՕ, *Յոյն օրիորդ։*
4) ՌՈՒԲԷՆ, *Լեռնի որդի։*
5) ԿՈՍՏԱՆԴ, *Լեռնի զօրավար։*
6) ՓԻԼԻՊՊՈՍ, *գերեզմանափորներէն առաջնէ։*
7) ՄԱՏԹԷՈՍ ՍԿԻՆՕ, *պահապաններուն գլխապետ։*
8) ԼԱՄԲԵՐՏՈՍ ՕՏՏՕ, *բանտապետ։*

9 1 } *Պահապաններ։*
10 2 }

11 1 } *Գերեզմանափորներ։*
12 2 }

Հայկական զօրք։

Գործողութիւնը կատարվում Ամասիոյ մէջ 1142 *թուին։*

Հարկաւոր է յայտնել ընթերցողներին, որ դրամիս մէջ պատմաբանական ճշտութիւնը զոհաբերված է երբեմն բանաստեղծական ազատութեան (Licentia poetica)։ *Հեղինակ։*

Բաժանումն I։ Սպասաւոր և Գերի։

Սենեակ Լևոնի պալատում, Ամասիայի մէջ։ Աջ կողմում թագաւորի ննջարանի դուռը։ Սեղան և բազկաթոռներ (кресла)։

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ։

(Ռուբէնը կանգնած է ննջարանի դրան; Կոստանդը և Լէօնօրան մտնում են; Լէօնօրան տղայի շորերով։)

ԿՈՍՏԱՆԴ։ Թագաւորը զարթեցաւ?

ՌՈՒԲԷՆ։ Հա՛ զարթեցաւ։

ԿՈՍՏԱՆԴ։ Ինչովէ պարապած? Ինչէ շինում?

ՌՈՒԲԷՆ։ Նա առաւօտներ միշտ բանաստեղծութիւններ է շարադրում իւր ողբալի հայրենիքի վերա։ Բայց շուտով դուրս կ'գայ։ Եթէ կամենում ես, ես կ'ասեմ։

ԼԷՕՆՕՐԱ։ Ինչէ նորան վրդովիլ? Երբ բանաստեղծը մըտքերի մէջ կ'հետևանայ հեռու, գեղեցիկ երկիր, ինչէն է պէտք այն ժամանակ նորան յիշեցնել մեր ողբումելի կեանքը և աշխարհը? բացի սորանից, Կոստանդ, ես շատ ուրախամ, որ կարողեմ մի վոքը ևս պատրաստել ինձ թագաւորի հետ տեսութեան համար։ Ո՜հ, երկիւղից ակամա սիրտս մեռնում է։

ՌՈՒԲԷՆ։ Ես ձեզ կ'թողնեմ։ (Գնում է)։

ԼԷՕՆՕՐԱ։ Կոստանդ, ես վախենում եմ։ Ողբան մօտենում է այն ժամը, երբ ես պէտք թագաւորի հետ տեսնվիմ, այնքան հանդիսաւոր սրտիս մէջ քաջութիւն և համարձակութիւն։

ԿՈՍՏԱՆԴ։ Դու գիտես, ես քո վարմունքը երբէք չեմ դովել։ Մենք կարողենք յետ դառնալ։

ԼԷՕՆՕՐԱ։ Ո՜հ, ոչի կերպով։ Դու ինձ լաւ ճանաչում ես, Կոստանդ։ Ես ցոյն աղջիկ եմ։ Շատ կարելիէ արաբմունքս անկոհեմ է, բայց ես հաստատ վճռեցի։ Մաքիւ է արդիօք, երբ ես առաջին անգամ տեսայ, ինչպէս Լևոնի թշնամիները, հրապարտանալով յաղթութեամբ, նորան յաղթանակով բերին մեր քաղաքը։ Նա կապուճէր ոսկեա շղթայով; հրապարակի մէջ ժողովուրդը անհամար թիւով եւեր գալիս բոլոր ջրս կողմ,

բայց այնուամենայնիւ, նորա ամենէքեան երեւումէին ծառա, ստրուկ, եւ Լեւոնը շղթաներով կապված գերի եւ նոյն թագաւոր էր: Թէև նորա գլխին չէր փայլում արքայական թագը, բայց բոլորը ակամա նորա առաջ գլուխ էր խոնարհեցնում: Իսկ ճակատին վերա մեծութեան նշանը, առանց թագի եւս կարող էր իւրաքանչիւրն կարդալ: Նա չունէր գէնքը, բայց նորա հայեացքի զօրութիւնը նորան այնքան սրտեր գրաւեց: Նորա, որոնք վառվռումէին կրակի նման, սուր թուրի պէս խոր ծակեցին իմ սիրտս: Դու դիտես բոլորը. ես նորան սիրեցի, թէև մեր վիճակը երկար ժամանակով բաժանեց մեզ; թէև ամբողջ տարին պէտքէ չարչարվէի ես հեռու այստեղից, տեսնելով մօրս ծանր հիւանդութեան մէջ; թէև հիւանդիս անկողնի մօտ եւ օրեր եւ ամիսներ անդարձ թռչում գնումէին; թէև տրա մօտ մոռացայ Լեւոնին, բայց ..... զարհուրելի ժամ.... Հանդաւ մայրս իմ դոդում.... Եւ միայնակ ես վարումէի իմ խեղճ կեանքը խորին տխրութեամբ; ես լալէի եւ յանկարծ այն տրտում ժամին սէրը կրկին վառվեցաւ իմ հոգուս մէջ....

ԿՈՍՏԱՆԴ: Եւ դու այնոր համար յետ դարձար Ամասիա, որ նորան տեսնես?

ԼԷՕՆՕՐԱ. Միտքս միայն այնէր, որ ապրեմ նորա հետ, որ իմ ողորմելի կեանքը նվիրեմ անբաղդ թագաւորին, որ աշխատանքով, սէրով, հոգատարութեամբ քաղցրացնեմ դառն տրտմութեան ժամերը եւ այս սրտին երջանկութիւնէ բնէ; ուրիշ բաղդաւորութեան վերա մտածել անդամ չէմ համարձակվում:

ԿՈՍՏԱՆԴ: Բայց եթէ վսեմափայլ գներին իմանայ քո սիրը, իմանայ, որ դու աղջիկ ես:

ԼԷՕՆՕՐԱ: Ես միանգամեմ միայն տեսել նորան, բայց նա բաղմութեան մէջ երեւի բնէ չնշմարեց ես: Տղա—մարդի շրթերին ես վաղուց սովորեմ.... նորա հոտատարիմ ծառաներից մենք այստեղ միայն ենք—ես չեմ վախենում մարդիկների խօսքերից— ես այստեղ անվնաս եմ: Թագաւորը վեհանձն եւ ազնիւ մարդ է, իսկ ես պատուել կ'տամ բնէ:

ԿՈՍՏ. Բայց սիրտը, սիրտը, Լէօնօրա; դու դորա վերա յոյսդ

շատ ես դնում՝ կարելիէ դա քեզ խարէ։

ԼԷՕՆՕՐԱ· *Կոստանդ, մի՞թէ սէր և պատիւ չեն կարող միասին լինել?*

ԿՈՍՏԱՆԴ· *Այդպէս է, բայց ես վախենում եմ։*

ԼԷՕՆՕՐԱ· *Ես էլ, Կոստանդ; բայց ես հնազանդվում եմ վճակիս և սրտիս, և իմ նպատակը մաքուրէ մարդիկների առաջ։*

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ։

Ռուբէն, յետոյ Լևոն։

ՌՈՒԲԷՆ։ *Թագաւորը գալիս է։*

ԼԷՕՆՕՐԱ։ *Թագաւո՞ր։ Ո՛հ Աստուած! Կոստանդ, ես բոլորս դողում եմ։*

ԿՈՍՏ։ *Արիացի՛ր, ժամը հասաւ։*

ԼԵՒՈՆ։ (*Մտնում է, նոցա չնկատելով*)։ *Տարին էլ անցաւ, բայց ոչինչ յոյս չկայ, և Լևոնը, Հայաստանի թագաւորը, Կոստանդին I-ի որդին, Ռուբենեան վերջին թոռը, չարչարվում է բռնութեան մէջ և վարում է իւր կեանքը ամենաչնչին պատրաստութեամբ, հեռու հայրենիքից։*

ՌՈՒԲԷՆ (*նորան մօտենալով*)։ *Թագաւո՛ր, դեռ բոլոր յոյսը չէ կորած. Հայերը դեսպան են ուղարկել և պահանջում են քո ազատութիւն։ Ահա արդէն հաւաքվել է խորհուրդը, մի ժամից յետոյ կ'տայ իւր վճիռը և դու կ'ստանաս թագ և ազատութիւն։*

ԼԵՒՈՆ։ *Ջուր յոյս, ես ահալէ եմ սոցա համար; ես միշտ ցուցանատանի թշնամի եմ եղել; ես միայն միանգամ չեմ սարսեցրել սոցա—և միթէ կարողէն սոքա վճռել ինձ ազատութիւն տալ?*

ՌՈՒԲԷՆ· *Բայց եթէ սոքա կ'մերժեն քեզ տալ ազատութիւնը, նոցա սարսափելի և արիւնահեղ պատերազմ է սպասում։*

ԼԵՒՈՆ· *Թէպէտ Հայերը այժմ ցաւում են իւրեանց դերի թագաւորի վերայ, բայց նոքա ղեռվաճճեն ահագին պատերազմներով, անկարգութիւններով հաւատի մասին։ Եւ ժամանակ ունէին նոքա արդեօք արքայի վերայ մտածելու? Խնդրել նոքա կարողէն իմ ազատութիւնը, բայց պահանջել անկարելի է նոցա։ Ռուբէն, դու միշտ միաքս ես բերում այն, ինչը*

պէտքէ ես մոռանայի, ինչպէս կարողէի ես լինել .... Մի՛ վըշտացիր ինձ դառարկ յոյսերով; մի՛ բանար սրտիս վէրքերը և իմ հայրենիքը, իմ հպատակները միաքս մի՛ բերեր : (Ուրիշները լռում ողջունում են) :

ԿՈՍՏԱՆԴ· (Մօտենալով): Երէկ վախճանվեցաւ, թագաւոր, քո սպասաւորը Վահրամ Ասպետունին :

ԼԵՒՈՆ. Հա՛, նա ինձանից մի՛ մի րոպէ չէր հեռանում; նա թագաւորին այնպէս վառ սիրում էր, ինչպէս մոեռլմանը Ծառայում էր .... Ո՜հ... Տաճն և ուխտ տարեկան թողնել յաւիտեան այս աշխարհը : Վահրամ ես էի պատճառ այդ քո մահի : Դու թագաւորի հետ գնացիր պատերազմ; նորա հետ կռուիմիր իբրև հսկայ, դու պաշտպանում էիր նորան կուրծքովդ, և նորա հետ միասին դու դերի դարձար թշնամիներին : Նա շատ անգամ փորձված լինելով տարկուԹիւնների և թըշվառուԹիւնների մէջ, նոր փոԹորիկներից ևս անվնաս մնաց, բայց դու, Հայաստանի դաշտերից քաղված շքեղ և դեղեցիկ ծաղիկ, Ամասիա գալով թառամեցար տրտմուԹեան և ցաւի մէջ առանց հայրենական օդի! Բարի ծառա իմ, հաւատարիմ սպասաւոր իմ, քո հետ ինչի՞ ինձ ևս գերեզման չտարար?

ԿՈՍՏԱՆԴ· Նա իւր հոգատարուԹեամբ դերու օրերը քաղցրացրեց; նորա վիճակը նախանձելի է, արքա!

ԼԵՒՈՆ· Ճշմարիտս ասում նա նախանձելի է—միայն դադաղի մէջ : Ինչպէս անբաղդեմ ևս ընտանիքով ևս! Սաստիկ վիճակ! Ջորս տարի առաջ զրկվեցայ կնոջից, աղջկից, այժմ ամենից ևս զրկվում եմ ի հաւատարիմ ծառայից : Գիտեմ, վատԹար գերուԹիւնս է սպասում բարեկամներիս և նոցա մահը ծանր քարի և դառն նախատինքի նման ընկնում գլխիս վերա : Ուրիշներ հնար են դանում այստեղից ազատվելու դոնէ մահով : Եւ շուտով ևս, բոլորից զրկված աշխարհիս վերա, կըմնամ իմ բանտիս մէջ միակ միայնակ :

ԿՈՍՏ· Խնդիր վահրամի տեղ ևս ուրիշ սպասաւոր եմ պատրաստ քեզ:

ԼԵՒՈՆ· Ուրիշ? Ինչպէս? Եւ կայ մարդ, որ կամենում իմ հետ իմ ծանր գերուԹիւնս վարել? Ո՜հ! ով է նա? Նա պէտքէ Հայաստանից լինէր!

ԿՈՍՏ· Ցոյն է նա; քո անբաղդուԹենից շարժված, նա կա-

մենուամ քեզ ծառայել։

ԼԵԻՈՆ։ *Ցոյն ..... Ուրի՞ նա։ Նորան կամենուամ ես տեսնել։*

ԿՈՍՏ։ *Նա իմ հետ է. նա այստեղէ.... (Բերուամ Լէօնօրային; սա շփոթի մէջ խոնարհեցնուամ գլուխը; Լեւոնը նայուամ նորա վերա զարմացմամբ մի ինչ միտք բերելով)։*

ԼԵԻՈՆ։ *Ինչպէս? Ա՜յս սպասաւոր .... Աստուած! ինչ նըմանութիւն! Ով ես, գեղեցիկ երիտասարդ? Ինձ դու զարմացրիր անակնկալ գալովդ։ Դու եկելես իմ գերութեան մասնակից լինելու?... Շնորհակալեմ .... հարիւր անգամ շնորհակալեմ...*

ԼԷՕՆՕՐԱ։ *Ո՜հ, թագաւո՛ր ...! իմ ընչին ծառայութիւնը դու չ'մերժեցիր, դու կամք տվեցիր ինձ քո մօտ մնալու .... (կամենուամ ծունկների վերա ընկնել)։*

ԼԵԻՈՆ։ *Ո՛չ, իմ մօտ, սրտիս վերա և եղիր ինձ բարեկամ.... Լէօնօրան շփոթված կեաց է քաշվուամ)։*

ԿՈՍՏ։ *Աըքա՛, դեռ առաջին անգամ է տեսնուամ իւր առաջ թագաւորին; դա կրթված է հեռու այստեղից, առանձնութեան մէջ, ինձ հեռու ազգականէ; առաջին անգամ է եկել Ամասիա և Լէօնօր է դորա անունը։*

ԼԵԻՈՆ։ *Բայց ինչէ սորան արգելուամ ընդունել համբոյրը և թագաւորի և բարեկամի?*

ԼԷՕՆՕՐԱ։ *Թագաւո՛ր! այդպիսի ողորմութիւն, ես խնդրս որքա—անարժանեմ այդ պատուին .... դուք ակամա իմ վրդովումը նկատեցիք։*

ԼԵԻՈՆ։ *(Նկատելով նորա իւրաքանչիւր բառը)։ Ո՛չ, ես չ'եմ սխալվուամ.. երկնային զօրութիւն!... Նա էլ... Ո՜հ, նա է. ես անպատճառ պէտք իմանամ։ Բայց այժմ, կոստանդինէ, հեռացիր; ես առանձին խօսել կամենուամ իմ սպասաւորի հետ..... Քեզանից շնորհակալեմ, բարեկամ; դու միշտ մըտածել ես և հոգս ես տարել թագաւորիդ և բարեկամիդ վերա; շնորհակալեմ, բարեկամ, (մեկնուամ ձեռը)։*

ԿՈՍՏԱՆԴ։ *Բայց, աըքա՛, քո հետ մնալ վախենուամ դա։*

ԼԵԻՈՆ։ *Վախենուամ! Ամաչիր, կոստանդինէ։ Լեւոնից մի ժամանակ թշնամիներ միայն էլին վախենուամ, բայց նոցա ես թագաւորն էր ահարկու և ոչ խնդճ դերին։ Մինք պատերազմական դաշտի մէջ չինք, սիրելի բարեկամ, թողիք մեզ։*

ԿԻՍՏԱՆԴ։ (Ողջունում է դնալով կամաց առում է Լէօնօրային)։ Դու էս այդ էիր կամենում (դու լսէ գնում Ռուբէնի հետ)։

ԼԷՕՆՕՐԱ։ Ո՛հ Աստուած։

ԼԵՒՈՆ։ (Մօտենում է նորան և առնում նորա ձեռը)։ Բարի Լէօնօր, դու իմ հետ կամենում էս կեանք վարել։ Ես ցաւում եմ քո վերա։ Դու պատանի ես։ Աշխարհի զվարճութիւնները պէտք է քեզ ակամա քաշեն։ Այստեղ չէս գտնի դու ոչինչ։ Գերին կարող է քեզ մանակից անել միայն նեղութեան։

ԼԷՕՆՕՐԱ։ Ես չեմ խնդրում ուրախութիւններ և զվարճութիւններ։ Ես բաղդաւոր կ'լինեմ, եթէ հոգատարութեամբս կարողանամ ձեզ հատուցանել տխրութեան մի կնճիռը և շրթունքիդ վերա երեւացնել մի ժպիտը։

ԼԵՒՈՆ։ Քեզ իմ բանտս միթէ չէ վախեցնում?

ԼԷՕՆՕՐԱ։ Գերութեան մէջ էլ ես տեսնում եմ նոյն թագաւորին։

ԼԵՒՈՆ։ Չ'է, գերի է նա։ Երկու անգամ ողբմելի գերի է նա այն ժամանակից, երբ մի գեղեցիկ աղջկի հայեացքը հիւանդոտ սիրտս սէրով կապեց և այս սէրի շղթան նոյնպէս ծանր է, ինչպէս այն շղթան, որով ինձ կապելին թշնամիները։

ԼԷՕՆՕՐԱ։ Ինչպէս? Թագաւոր! սէր!

ԼԵՒՈՆ։ Չեմ հասկանում, այս ինչ զգացումը հարկադրում է ինձ բոլորը քեզ ասել։ Թէպէտ և առաջին անգամ եմ տեսնում ես քեզ այսօր։ Ակամա հաւատարմութիւն զգացիր դու իմ սրտիս մէջ դէպի քեզ։ Ակամա հարկադրում էս ինձ ամենայն ինչ խոստովանել։ Ես քեզ կ'ասեմ այն, ինչըր մինչև այսօր Լևոնից ոչ ոք այստեղ չէ լսել։ Տարին էս անցաւ, բայց այն օրը դեռ այնպէս մռքումս է, ինչպէս երեկեանը։ Ինձ բերեցին Ամասիա շղթաներով կապված, հոգուս մէջ եռէր գալիս յուսահատութիւնը և աչքերումս դէպի այն ցածր յաղթողները ոչ ատելութիւն — արհամարհանք էր վառվում։ Ներքև ժողովուրդը նայում էր ամբիս վերա; վերև բարկութիւնից նպարտ մեծատուները ծիծաղում էին անխղճաբար։ Ես վերև հայեցի և տեսայ հրաշալի դէմք, որ չէր նման այս կամ այն պետերիկների դէմքին, այնքան շատ էր նորա մէջ կրակ, հո-

պին, համակրութիւն, յաւակնութիւն : Այն ինձ դժվար ժամին լռութեան մէջ ես ուղղակուսի Աբարիկն գոհութիւն այն գէմքի համար : Ես մոռացայ և իմ անձը և պերութիւնը և ապառնիս բանտով և տխրութեամբ — և այն գէմքը— այս մթագին պատերի մէջ այժմ ես փայլում իմ առաջս.... Նա ալ մի րոպէ չէ թողել ինձ; տրտմութեան ժամին նա ինձ ուրախութիւնէ տղել; անբաղդութեան օրին նա ինձ հզօրացրել; կեանքիս համար նա ինձ պարգև է խոստացել, նա ինձ առաջնորդում աստղ նման, նա ինձ թանկ է եղել ինչպէս հայրենական օդը..... և այն գէմքը, լի կրակով — ինձ թվում, այժմ ես նորէն տեսնում եմ.....

ԼԷՕՆՕՐԱ : (Սաստիկ շփոթված) : Աբարիչ.... Ո՜հ, թագաւոր! Ներիր իմ վըրովումը, բայց քո խօսքերը ինձ շփոթեցրին :

ԼԵՒՈՆ : Դու վըրդովվածես!... Միթէ կնոջ գործ չէ այս յաւակնութիւնը? Մտածիր.... ես այստեղ միայնակ եմ... իմ հառաչանքը, լացը, հոգուս չարչարանքը անպարտ կմեռնին : Ոչ ոք մխիթարութեան ձայն տալու չէ նոցա : Ոչ ոք իմ արիւրութիւնս չի նշմարի և չի հասկանայ իմ անտանելի չարչարանքը; գերութեան կեանքիս ով կ'լինի մասնակից? Չէ, ես ոչ ոք չունիմ. իմ համար չէ ուրախ խօսք լսելը; իմ համար չէ վաստակած դլուխս մահկան տրտմութեան ժամին սիրելի կուրծքի վերա թեքելը; իմ համար չէ սրտիս ցանկութեան կատարումը : Բայց ես լռումի և չէի տրտնջում Աստուծու վերա, թէև բոլոր կեանքիս մէջ միայն չարչարանք եմ իմացել և տեսել : Կեանքս ինձ շատ բաղդ չէ խոստացել : Ինչի ուրեմն դու եկար իմ մօտ?

ԼԷՕՆՕՐԱ : Ես.... Թագաւոր.... մաքի եկէք! Ինչ պատահեց ձեզ? Ես Լէօնօր եմ, ձեր սպասաւոր :

ԼԵՒՈՆ : Չէ, երկնքով երդվիր ինձ, դու նա չէս, նա չէս, որ երեւումդ ինձ իբրև երեոյթ, իբրև ոգի, իբրև երազ, իբրև քաղցր մտածութիւն, իբրև եկեսկայութեան պատուղ : Ո՞ւր ես դու?... Ողբումի՛ր! մի՛ չարչարեր սիրտս..! Ո՜հ, պարգևիր ինձ դոնէ քո մի երկնային հայեացքը : Քո հետ իմ բանտս կլինի արքայութիւն :

ԼԷՕՆՕՐԱ։ Ինչ անեմ?... Աչքիրուս լույսը միմնացաւ։

ԼԵՒՈՆ։ Մխիթ մի բոպէի համար բաղդս... միթէ յոյսս ինձ խաբից.... կարելիէ դու ոնիս քոյր....

ԼԷՕՆՕՐԱ։ Ոչ։ Բայց նմանութիւն.... ես....

ԼԵՒՈՆ։ Ո՜հ! այս դու ես; բոլոր աշխարհը ինձ կ'ասէ չէ, և բոլոր աշխարհը կ'սխալվի։ Ա՜յս դու ես, հոգուս առարկա, որի մօտ, սիրոս սէրով լցված, վաղուց քաշվումէր; որի համար բոլոր տարի՛ չարչարվումէի, տրտմումէի, որ ինձ այժմ բոլոր աշխարհը վոխարինից, որի համար հոգիս ցաւումէր և սիրոս պատառվում։ Եւ ինչ է այժմ բոլոր աշխարհը? դու իմ յոյս ես և թագաւորի մխիթարութիւն.... Մի հայհոյաք գոնէ, մի բառ գոնէ, հրեշտակ իմ սիրելի։

ԼԷՕՆՕՐԱ։ (ընկնելով Լևոնի ոտներին)։ Ո՜հ Լևոն!... ներիր ինձ ... ես չեմ կարող... չկայ զօրութիւն... ներիր ինձ. սէր դէպի քեզ... թագաւո՛ր!...

ԼԵՒՈՆ։ Արարի՛չ, ընդունիր իմ սրտի և հոգուս գոհութիւնը այս բոպէի համար։

ԼԷՕՆՕՐԱ։ Թագաւո՛ր, դու ինձ կօրցնելու չես....

ԼԵՒՈՆ։ Ես չեմ թագաւոր — դու սիրում ես գերին միայն, — նա քոհ յաւիտեան, սիրելի իմ! (Բարձրացնում նորան և գրկում)։

ԼԷՕՆՕՐԱ։ Ո՜հ, ողորմի՛ր.... ինչպէս! այսքան երջանկութիւն միասին, և Լևոնը անմիտ կնոջ ներում? (ընկնում նորա կուրծքի վերա)։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՒԹ։

Ռուբէնն, յետոյ Դոստանդ և խորհրդապետ և երկու պահապան զինուորներ հեռու։

(Ռուբէնը մտնում; Լէօնօրան թողնում Լևոնի գիրկը և ծածկում երեսը)։

ԼԵՒՈՆ։ Ռուբէն!

ՌՈՒԲԷՆ։ Աքքա! ես գիտեմ բոլորը; բայց և դու շուտով իմացար։

ԼԵՒՈՆ։ Բարեկամ, այժմ կարողէի ասել, թէ բաղդաւոր եմ; բայց.... իմ երջանկութեան պակաս են աղատութիւնը և Հայաստանի թագը։

ՌՈՒԲԵՆ : Արքա՛, Ծայրագոյն խորհուրդը աւարտվեցաւ : Խորհրդատետը ինքն գալիս է ձեզ յայտնելու վճիռը :

ԼԵՒՈՆ : Ինձ կարողէ յայտնի լինել նոցա վճիռը :

ՌՈՒԲԵՆ : Դուք, Լէօնօրա, մնալ նոյնպէս կարողէս; Խորհրդատետը դիտէ, որ այսօր մենք ընդունելինք նոր սպասաւոր :

ԼԵՒՈՆ :Ո՛հ, այժմ ես կ'տանեմ բոլոր չարչարանքներ համբերութեամբ ... ես գոնէ այստեղ բաղդաւորեմ, շատ բաղդաւոր, սիրելի բարեկամ: (Դուռը բացվում է, մանում է Խորհրդատետը, նորա յետևից կոստանդը, դուռներից երևում են պահապանները) :

ԽՈՐՀՐԴԱՊԵՏ : (կանգնում է, տեսնելով Լէօնօրային) : Ով է այս տղան ?

ԿՈՍՏԱՆԴ : Մի խեղճ որբ : Ես ասելիս ձեզ սորա մասին արդէն. սպասաւոր եմ նշանակել սորան ես վահրամ Պապետուեան տեղ :

ԽՈՐՀՐԴԱՊԵՏ : Բայց գիտէ արդեօք դա մեր հրամանը, որ պալատից ոչ ոք դուրս չգայ առանց գրաւոր հրամանի, մի բոպէով էս :

ԼԵՒՈՆ : Ինչով եմ արժանացել այդպիսի անհաւատարմութեան ?Ինչէ է ձեզ վճռել ինձ այդպէս նեղացնել ?

ԽՈՐՀՐԴԱՊԵՏ: Այսպիսի հրաման վճռեց Ծայրագոյն խորհուրդը: Հայաստանը ապստամբելէ: Կիլիկիան վրդովման և շփոթի մէջէ; սոքա մեզ պատերազմ են պատրաստում :

ԿՈՍՏԱՆԴ : Պատերազմ!

ԼԵՒՈՆ: Պատերազմ!

ԽՈՐՀՐԴԱՊԵՏ : Մի՛ ուրախանար առաջուց : Պատերազմը մեր խորհուրդի վճռի հետևանքէ միայն : Քո բարեկամները խնդրում են, որ մենք քեզ ազատենք :

ԼԵՒՈՆ: Եւ դուք չ'համաձայնվեցաք?

ԽՈՐՀ: Զ'է, և մանրամասնաբար քննելով գործերի դրութիւնը Ասիայում, բոլորը կշռելուց յետոյ, հպարտ Ռուբենեանների իշխանութիւնը և Հայերի կամքը և մեր Յունաստանի աղմուկները—վճռեցինք մենք, որ դու վտանգաւոր ես մեզ և հաստատեցինք քեզ գերի պահել մինչև իսկ մահդ :

ԼԵՒՈՆ: (Տխուր) : Մինչև մահս!

ՌՈՒԲԻՆ: Ա՛յդ անկարելիք է! Անօրինաբար էք վարվել դուք։ Թագաւորս և հօրս համար ես այստեղ համարձակ կը-բարձրացնեմ ձայնը։ Ինչ իրաւունք ունիք դուք դերի պահելու? Բոլոր ազգերի տէրութիւնը իրաւունք է տալիս փոխանակութեան և ազատութեան (размѣнъ и выкупъ)։ Եթէ դուք հսկա—թագաւորիս հաւատար չէք դտնում ձեր զօրապետների մէջ, որոնց մենք պատերազմներում դերի առանք,—նշանակեցէք սորա ազատութեան գինը, այն ժամանակ վերջին հայն կ'բերէ բոլորը, ինչ ունի, սրբազան անօթներից ոսկի կ'հալէ, նախնիների փառաւոր թուրը կ'գրաւէ, հարազատ հօր դագաղը կ'ծախէ և կ'ազատէ իւր հարազատ թագաւորին։

ԽՈՐՀՐ։ Դուք պիտի կապվածէք ձեր թագաւորների հետ և թէպէտ պղտիկ հաւատարիմներն հայերը նոցա, այնու ամենայնիւ միշտ այսպէս ընկած և դերի։ Տեսնում՞ք, մենք ինչպէս ծաղկում ենք և բարձրանում!

ՌՈՒԲԵՆ։ Կ'դայ ժամանակ—կ'ընկնէք և դուք։ Տարաբաղդութեան օրերին ով կլինի ձեր պաշտպան? Թշուառութիւնների մէջ ով կ'ազատէ ցնծասատանը? Դուք պարծենում՞ք ձեր դատարկ ազատութեամբ—ազատութիւնը օրէնքներով է միայն հաստատ։ Բարի թագաւորն է միայն օրէնքի պաշտպան; այնտեղ չկայ ազատութիւն, որտեղ չկայ թագաւոր—օրինապահ, բայց թագաւորի տեղ իշխում է բռնակալ—օրէնստու։

ԽՈՐՀՐ։ Հայաստանի որդի, միաքդ բե՛ր ում հետ ես խօսում։ Անբա՛նդ, քեզ և կոստանդին կաթլիկ տվված թագաւորի հետ ինձալու, մեր ողորմութեամբ, և դու, Հայաստանի պատկառելի թագաւորի որդի, Բիւզանդիոսի խորհրդապետին ես համարձակվում վիրաւորել?

ԼԵՒՈՆ (որ բոլոր ժամանակ խորին մտածմունքի մէջ էր կանգնած)։ Թո՛ղ ունայն վէճերը, Ռուբէն! որտեղ զօրութիւնն է տալիս մեզ օրէնքը, այնտեղ ճշմարտութիւնը լռում է, Տեսնում ես, —նոցա վճիռն ես հանդիսա հնազանդվեցայ։

ԽՈՐՀՐ։ Եւ քեզ արդեօք մեր վերա տրանջալ? Մենք քեզ բանտի մէջ և շղթաներով կապված չենք պահում։ Ճշմարիտ է, նոր դերի դարձած ժամանակդ բանտի մէջ էիր, բայց մենք

չէիք՝ որ խղճայինք քո վերա? Մենք քո համար լաւ պա-
տասխան ընտրեցինք: Դու այդտեղ աղատ ես; դու իրաւունք ու-
նես ընդունել ամենեցուն: Դու ոտներ ես կատարում; մեր մե-
ծատուններ յամառ քո մտքի սեղանի վերա նստած զվար-
ճանում են; և այս է միթէ դերութեան կանոքը? Երկհետև վա-
ղիւ մենք դուրս ենք գնում Ամֆիպոլից և պէտք է գնանք հաս-
նենք Կիլիկիա, որտեղ Ահմետ—Մկրտիչը յարձակվել է Հայերի
վերա և կոտորում է նոյա, քաղաքից ոչ ոք առանց հրամանի
չէ կարող դուրս գալ; բայց այս վճիռ տալ հարկաւոր է մեզ
քո Հայաստանը: Հայերի զօրքերը վրդովված են. թագաւոր են
պահանջում; մեզ գրում են, սպառնում են մեզ պատերազմը,
սորա համար մենք քո հետ առաւել աստիճապէս պէտք է վար-
վենք.... Եւ իմացիր, եթէ դու փախչել կկամենաս, լաւ մտա-
ծիր, մենք անխիղճ անողոքելի կ'լինենք, եթէ քո փախուստը
չ'աջողվի: Իմացիր այս դու, Հայաստանի թագը և բաղ-
դը կորցրած թագաւոր: (Դուրսէ գնում պահապանների՝
դուռը կողպվում է):

ԼԵՒՈՆ: Ա՛ւաղ թշուառ դրութեան! Բայց երբ կորչում է բո-
լոր Հայաստանը, անտեսի է ողբալ և ցաւել նորա թագաւորի
կորուստի վերա: Այժմ հասաւ վերջին յոյսը: Ես տեսնե-
լու չեմ երկիրս: Ինձ վիճակվածէ անդկացնել օրերը թըշ-
վառութեան մէջ և մեռնել ամօթով և շղթաներով կապված:

ԷՕՆՕՐԱ: (Նորան մեծ ննջելով): Ե՛ւ միթէ, Լեւոն, քո բարձր
հոգով դու պէտք պարապ անգործ անդկայնես քո կեանքը
—մինչ կարողէիր փառքով բոլոր աշխարհը լցնել:

ԼԵՒՈՆ: Ինձ չկամեցաւ երկու ուրախութիւն յանկարծ
պարգևել նախախնամութիւնը. նա առայժմ պարգևեց քո
սէրը! (առնում է ձեռը):

ԷՕՆՕՐԱ: Չէ, Լեւոնը պէտք է աղատ լինի: Հայաստանի
Ռուբինեաններըը սովոր չեն դերութեան: Մենք կփորձենք վեր-
ջին հնարը—դու պէտք փախչես:

ՌՈՒԲԵՆ: Այո՛, դու պէտք փախչես! դեռ մինչև որ յոյս
կար, փախուստի վերա ես չեմ ասել ոչ մի բառ, բայց բո-
լորը կորաւ—այժմ փախուստով դու պէտք փրկութիւն գտնես:

ԿՈՍՏ: Մենք կ'գտնենք, կ'հնարենք հնարը:

ԼԵՒՈՆ: Ինձ փախչել! մոռացաք դուք թէ այստեղ մեզ ինչ-պէս են պահում: Սոցա դիւաստութիւնը կրկնապատկվելէ այժմ: Պալատից, քաղաքից չկայ ոչ մի հնար, առանց դրաւոր հրամանի, դուրս դնալ: Միտք բերեցէք, մեզ ինչ ասաց Խորհրդապետը և ինչէ մեզ սպասում, եթէ մեզ չաջողվի:

ՌՈՒԲԻՆ: Մեզ ոսկին կ'օգնէ:

ԼԷՕՆՕՐԱ: Ես ոչինչ չունիմ, (հանում է կուրծքից մեդալիօն): Ահա բոլորը, ինչ մնացել է ինձ: Այստեղ մօրս պատկեր պատած թանկագին քարերով: Մայրս հրամայեց ինձ սորանից զըսժանվել, բայց ես կամենում եմ իմ վերջինը զոհ բերել:

ԿՈՍՏ: Չէ, Լէօնօրա, նախանձամոլութիւնը ինձ հարուստ կաղոզութիւն է տվել և շատ անգամ ես ինձ հարցնում եմ. ինչիս է պէտք? Այժմ ես նորան դործ կ'ածեմ օգուտով, որ մենք ազատենք մեր թագաւորին և բարեկամին:

ՌՈՒԲԻՆ: Որտեղ մեզ զօրութիւնը չէ օգնի — այնտեղ խորամանկութիւն դործ կ'դնենք:

ԼԷՕՆՕՐԱ: Ըհ, խորամանկութիւնը ինձ միայն թողէք դործ դնել! Այդ միայն կնոջ դործէ: Բայց շուտով վճռեցէք:

ԼԵՒՈՆ: Դժվարէ ինձ ձեզ հակառակել, բարեկամներ բայց պէտքէ, ես... ես չեմ կարող փախչել:

ԼԷՕՆՕՐԱ: Չես կարող!

ԼԵՒՈՆ: Չէ!... ինչ կ'լինի, եթէ մեզ մեր փախուստը չաջողվի? ես ձեզ կկորցնեմ իմ հետ, ոչ միայն ձեզ, բայց ամենքդուն, ով այստեղ մասնակից եր ինձ, թէ կեանքի, թէ նեղութեան մէջ, ով ճանաչեմեր ինձ, ով շուտ շուտ տեսնումեր ինձ, մինչև անգամ, ով դաւելէ խնդիր թագաւորի վերա և ես ինքս կ'ընկնեմ նոր բանտի մէջ և այնուհետև ձեզ աւելի տեսնել չեմ կարողանայ յաւիտեան: Չէ... բարեկամներ, չէ:

ՌՈՒԲԻՆ: Պատերազմական դաշտի մէջ իմ քաջ թագաւորս այսպէս չէր երկչոտ: Ով հաւատումէ բաղդին, նորան միշտ բաղդաւորապէս բոլորը աջողվումէ:

ԼԵՒՈՆ: Չէ! Ռուբենեանները բաղդ չեն ճանաչում, այժմ ինչի պէտքէ ես նորէն փորձեմ? Այժմ ով մտածում աշխարհիս մէջ Լևոնի վերա? ինչ երևիմ ես, ամենից մոռացվածի կրկին բանալ արիւնահեղ պատերազմը, կրկին պատերազմի մէջ

ամօթալի գերի բռնվիլ ?

Ա՜հա Ցոյների կայսրը տիրում Հայաստանին • սա երջանկացրել է իմ հպատակներիս, և ես այժմ նոցա երջանկութեան համար աւելի հարկաւոր չեմ: Նոքա հանդիստ են նորա կառավարութեան տակ : Նոցա նեղացնել դրսոյներ չեն համարձակվիլ; յանդուգն թշնամին նոցա կալվածները չէ կարող առնել, կայսրը նոցա կ'պահպանէ: Եւ առանց ինձ և կ'յաղթեն նոքա և կ'պատերազմեն :

ԿՈՍՏԱՆԴ: *Ես տեսնում եմ, թագաւոր, որ քո արի ոդիդ թշնամիների գերութեան մէջ ընկելէ և թուլացել :*

ԼԵՒՈՆ: *Չ'է, չէ, քաջութենից ես չեմ թուլացել; ես նոքին պատրաստ եմ, ինչպէս անցած օրերին, իմ Հայերի ջոջքով յարձակվել թշնամիների վերա: Ես շատ անգամ նկարագրում եմ ինձ անցած յաղթութեւնները : Ամեստիս, որտեղ ես կռվում էրև հատարակ զինուոր և այս քաղաքը առնելով ճանաչել տվեցի ինձ Հայերի արքա: Անարզաբար, որտեղ ես բոլոր Ցոյներին կոտորեցի, որտեղ ես որդիներս պաշտպանեցի : Ես լաւ միտք եմ բերում Տիգրիսի ափերը և բարբարոսների փախչող դունդերը; ես նորին կարող էի Հպարտ Ցոյներին ահարկու լինել և Ռուբենեան փառքը յարուցանել : Բայց փառասուտով ես չեմ կամենում նորին վորձել Ռուբենեան և Հայրենեքիս բաղդը : Հայաստանին ես չեմ կարող յետ դարձնել վաղեմի շքեղութիւնը և պայծառութիւնը և բոլորը, ինչ կատարելեմ անցած օրերում, ինձ երևում այժմ դեղեցիկ երազ...*

ԷՕՆՕՐԱ: *Ո՜հ, Լեւոն!....*

ԿՈՍՏԱՆԴ: *Չես կամենում ուրեմն դու փախչել?*

ԼԵՒՈՆ: *Չ'է—թողնենք այս վէճը—և առ միշտ: Ինչ փախչեմ ես! Ա՜յս տեղ ես հանդիստ կ'սպասեմ վիճակիս փոփոխութեան: Իմ գլուխս երեք պսակ է կրել իւր վերա • Թագաւորական պսակը տվեց ինձ նախախնամութիւնը ծնունդիս օրին; փշեա պսակը տվեցին ինձ մարդիկ, և մրտենին—դեղեցիկ սէրը : Այստեղ ես գտայ այն բոլորը, որով վարձատրում նահատհմանութիւնը չարչարանքի համար, որ լաւ է ամենայն պսակից, որով մարդս մոռանում ամենայն տարաբաղդութիւններ—երկու ուրախութիւն (մի ձեռը տալով Կոստանդին,*

միւսը Լէօնէօրային)..... եւ բարեկամութիւնը և սէրը: գուք կ'քաղցրացնէք գերութեանս դառն րոպէները:

ՉՈՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ:

Գող Վասիլ (ուխտագնացի շորերով):

ՎԱՍԻԼ: *Ողջոյն տանս, ուր չարչարուեմ գերութեան մէջ ինքնակալ կալանաւորը! որը ձեզանից, պարոններ, կարողէ ինձ ասել, որտեղ է նա?*

ԼԵՒՈՆ: (*խոր աչքով նորան նայելով*) *Վասիլ! արդեօք քեզ եմ տեսնում!*

ՎԱՍԻԼ: (*ընկնելով ծունկների վերա*): *Ո'հ, թագաւոր, թոյլ տուր ինձ նախ զովանալ քեզ տեսնելով, քո բառերը լսելով: Հինգ տարի է չեմ տեսել և չեմ լսել քեզ...:*

ԼԵՒՈՆ: *Ա՛յս ինչ է նշանակում, բարեկամ, ուխտագնացի շորեր? Ինչի ես այստեղ? Գրիգոր կաթողիկոսը քեզ լռնդրելէ Հայաստանի մէջ ոգի արծարծել, անկարգութիւններ և խռովութիւններ խաղաղացնել, համերաշխութեամբ ցոյց տալ հայկական զօրքին տէրութեան հնազանդ լինել: Բայց դու ինչի ես այստեղ?*

ՎԱՍԻԼ: *Քո մօտ գալիսեմ ծածուկ: Թշնամիներ չպէտքէ իմանան իմ այցելութեան պատճառը: Քո հպատակներից և քո ժողովուրդից դեսպան եմ գալիս քո մօտ; քո Հայաստանը կորզուած է, Հայաստանի իշխաններ ցիրուցան են եղած և ողջմէզի հայկական հոգևորականութիւնը երկու մասեր բաժանուած. քո կիլիկիայի եկեղեցին տարակուսած հառաչում քեզ: Աւելի չկայ Հայաստանում քո սիրելի հաւատը, ուր մնայ քո աթոռը և թագը: Անգութ թաթարներ, Ակիւթայիներ համարեա թէ քո Հայաստանի տէրը չեն արել: Յուսահատական տէրութիւնը բարձի թողել է Հայաստանը իւր առանին խռովութիւններին և աղմուկներին զոհ դառնալու: Չկայ ոչ ոք, մարդ մի, որ լինայէր Հայաստանը, որ ասէր թէ նա էս տէրութիւնէ եղել երբեմն, նա էս ունեցել է իւր թագաւորը, իւր կրօնը: Ո՛հ, արտասվելիէ Հայաստանի տեսարանը! և ինչ եմ թվում մի առ մի, ասումեմ. քո Հայաստանը դարձել է անապատ:*

ԼԵՒՈՆ։ Իսկ Գրիգոր կաթողիկոսը՞ Մինչ նորան էլ դաւաճանից բաղդը՞ միթէ նա էլ գերի է՞

ՎԱՍԻԼ։ Ա՛խ! եթէ միայն գերի լինէր, այն ժամանակ դուն կարողէինք փորը լինչ յոյս ունենալ։

ԼԵՒՈՆ։ Ա՛յս լինչէ նշանակում՞ Ա՛ւարտի՛ր։

ՎԱՍԻԼ։ Աղքա՛ւ! նախախնամութիւնը վաղուց սկսել է հայաստանը հալածել։ Գրիգոր կաթողիկոսը։...

ԼԵՒՈՆ։ Հիւանդ է՛։

ՎԱՍԻԼ։ Չ'է, նա մեռաւ։

ԱՄԵՆԵՐԵԱՆ։ Մեռա՛ւ։

ԼԵՒՈՆ։ Նա մեռա՛ւ! նա կիլիկիան վերջին պաշտպանը!... Չէ, յեա վեր առ քո զարհուրելի լուրը։ Ա՛յո՛, որ դու սխալ-վեցար, խաբվեցար, որ ես իմ օգնական Հայրապետից բաժան-վել չեմ յաւիտեան։

ՎԱՍԻԼ։ Զարչարանքի մէջ աւարտեց իւր օրերը նա; տես-նելով կաթողիկոսական աթոռի բաժանվելը, հոգևորականու-թեան երկպառակութիւնները, Հայաստանի կործանումը ցա-վելով անցկացրեց քեզանից յետոյ իւր կեանքը. սաստիկ հիւան-դութիւնը բռնեց նորան վերջապէս, տարաւ դրեց գերեզ-մանի մէջ։

ԼԵՒՈՆ։ Հայաստա՛ն! Հայաստա՛ն! կիլիկիան անբաղդ աթոռ, ողբալի դու երկիր! կարողէի արդեօք մոռանալ երբէք ես, որ քո կործանման լուրեր լինէ Յունաստանի մէջ պ'ոտք է հասնէն և ես գերութեան մէջ հանգստութեամբ լսեմ քո տառապանք-քդ։ Թագաւորից զրկված լինելով, Հայաստանը կաթողիկոսից էլ զրկվեցաւ; և կարողէի ես միտք անել թէ չեմ ստանայ Գրի-գոր կաթողիկոսի վերջին հրաժարական օրհնութեան ողջոյնը, թէ իմ ձեռով չեմ փորի նորա գերեզմանը։ Ա՛խ! լինչէ մնա-ցել լինէ աւելի աշխարհիս վերա! ո՛հ, լինչի եմ աւելի ապակա-նում հողը ոտներիս տակ! (Խոնարհվում է աթոռի վերա և ծած-կում երեսը ձեռներով)։

ՎԱՍԻԼ։ Ա՛յտեղ դեռ չդիտեն, թէ կաթողիկոսը մեռաւ։ Ես եկել եմ Ա՛մասիա, ամենից ծածուկ, ուխտաղնացի շորերով. ես վախենում եմ, որ երկար մնալովս սոցա կասկած տամ, ու-րեմն կրկին խնդրում եմ փրկի՛ր ժողովուրդդ։ Եթէ ոչ, սրբելի

արքայ իմ, բոլոր ազգը թշվառութեան մէջ կ՚վերջանի եւ կեանքը անբազդութեամբ: Ուրեմն ժամանակը հասել է, փա-
խի՛ր այստեղից, նստի՛ր քո հայրենիքի աթոռի վերա: Փրկի՛ր ժողովուրդդ, փրկի՛ր ազգդ: Արդէն Հայաստանի մէջ զրքերը հա-
ւաքվել են ծածուկ. եկել են եւ Տարսոնի մօտ բանակել են. չգիտեն ինչ սիրեն: ուրախացրու նոցա քո անակնկալ գալուդ, ժողովի՛ր քո անձնագիր Հայերին եւ նորին, ինչպէս յաղթո-
ղութեան եւ փառքի օրերին, տար նոցա պատերազմ թշնամիների դէմ: Քեզ կանչում ժողովուրդը; քեզ սպասում նա անհամ-
բերութեամբ; ձգի՛ր կապանքը—ա՛յդ գերի, այլ թագաւոր ե՛կ դու նոցա մօտ, եւ այն ժամանակ աշխարհը կ՚դողդողայ Ռու-
բինեանների ձայնից եւ Տպարտ Յոյնը կփախչէ մեր առաջից: Ա՛հա, բոլորը ասում: Հայաստանը սպասում քեզ. ժամանակը հասել է, փախի՛ր, փախի՛ր այստեղից, եւ նստի՛ր քո հայրենական աթոռի վերա: Ա՛յժմ ես ողջունում իմ թագաւորին: (Գնում է):

ԼԵՕՆՈՐԱ: (Լեւոնին մօտենալով): Դու հասկացար, արքա; շտապի՛ր, մինչեւ կիլիկիան մէջ մտքում ունին քեզ, մինչեւ հա-
յերի մէջ չէ հանդել հայրենական սէրը: Հաւատա, կաթո-
ղիկոսը մահը պատճառ կ՚լինի նորանոր սատիկ հալածանքների, մանաւանդ հոգեւորականութեան, եւ Յոյների յանդգնութիւնը մին երկու կ՚դառնայ այսուհետեւ....

ԼԵՒՈՆ: (Նորան չլսելով): Ա՛յո, Հայաստանի թագաւորների վերջին ցեղը բաղդ չեն ճանաչում: Ա՛ւաղ, ինչպէս հարուստ է մեր տունը տարաբաղդութիւններով: Ռուբէնից սկսած բո-
լոր մեր ցեղը ծաղիկ հասակի մէջ, պատի եւ փառքի ճանա-
պարհի վերա անհետանում—Ռուբէնը, կոստանդին Ա. Թորոս եղբայրս եւ ես այժմ:—Իսկ իմ թշնամիները—ախ! նոքա կար-
ծես անմահ են: Ամենայն դեղեցիկ դործի բաժին այսէ. ե-
րեւելքն եւ մեծը միշտ կարճատեւ է աշխարհիս վերա:

ՌՈՒԲԻՆ: Ա՛յդպէս է, Լեւո՛ն, ճշմարիտ ես ասում. ամենայն ինչ կորած. ուրիշ ինչ ունինք սպասելու? Կաթողիկոսը—հա-
յերի վերջին յոյսը—մեռածէ արդէն; թագաւորը գերիէ եւ ա-
զատվել գերութենից ինքն չէ կամենում, երբ անգութ պար-
սիկների բռնակալները աներկիւղ կողոպտումեն Հայաստանը, Ան-
տիոք քաղաքի իշխան պիտի ինը նեղացնում Հայերին, անողորմ

բարբարոս Սկիւթացիները ջրի նման հոսել են Հայաստանի մէջ և նորա բոլոր ծագկուն քաղաքներին կրակ են տալիս; Հռոմի պատը ուղարկում է կարդինալներին, վարդապետներին, որ բոլոր Հայերին կաթոլիկ դարձնեն և կատարումեն իւրեանց կամքը.... Վերջապէս հպարտ Յոյները տիրում են անխնա նորա տէրութեան և նստած են հանդիստ Հայկազեան պայծառ աթոռի վերա:

ԼԵՒՈՆ: (Վերթռչելով): Չ'են նստի նորա, իմացիր այսօրից, նորա չեն ստանայ բոլորովին իմ Հայաստանը. սա բոլորը կ'ընդդիմանայ: Չի լինի գործ?—Հայաստանի ալեւոր սարեր կը-զարթեն և առաջ կգան իւրեանց լայն տեղերից և արեւմտեան ճանապարհ կ'կապեն սոցա: Հայերը, կամենում եմ ասել, սարերին ժողովուրդը, սովորեն իւրեանց վերջինը գոհելու, իւրեանց աշխարհի, եկեղեցու, և թագաւորի համար: Չ'եմ ասում քանի մի նախարարների և հարստականների վերա, որոնք նոյնպէս սովոր են հոգեվաճառ և թշվառ հանդիսանալու ամենայն վիհանձն և աղնիւ գործի մէջ: Այսպէս ընդդիմանալու և պաշտպանելու են Հայերը:

ՌՈՒԲԻՆ: Սարեր չեն հարկաւոր այստեղ, բայց միայն Ռուբինեանը, փառաւոր թագաւորների փառաւոր թոռը:

ԼԵՒՈՆ: Եւ կ'կանդնէ այն Ռուբինեանը դրան մէջ և այնպէս կ'պահպանէ իւր հօր գերեզմանը:

ՌՈՒԲԻՆ: Զարթեցար արդեօք վերջապէս, Տիրապետ! կամենում արդեօք փախչել?

ԼԵՒՈՆ: Փախչել! փախչել.... Բայց հնար տվեցէք ինձ այս իմ կապանքը արձակելու: Ես կ'ապացուցանեմ իմ հպարտ թշնամիներին, որ հօր և եղբօր քաջութիւնը որդու մէջ չէ հանգել: Ես միայ կ'բերեմ այս մռայլոտ աշխարհին այն օրերը, երբ նա թորոս եղբօրս առաջ դողում էր, երբ նա խնարհեցնում էր մինչև գետին նորա առաջ իւր գլուխը: Ես կ'հագնեմ հայրական Տիրանի պատմուճանը, կ'առնեմ թշնամիների ձեռից եղբօրս թագը; այն թագը կարող միայն Ռուբինեանը ծածկել, գոռոզ Յոյները կ'տկարանան այդ թագը կրելու, սոքա կ'ծռվին նորա ծանրութեան տակ; բայց ես դեռ երեխա ծածկում էի նորան: Շուտով! Ա՛յնտեղ! Պատերազմ! Ազատութիւն թշնամուց!

Կամենում նորին ինչպէս առաջ ձայն տալ ժողովուրդին, որ նա բարձրանայ մինչև երկինք պատերազմական ձայնը· ապա ասաւ ցաւ մեր արքան, ապաւեցաւ Լևոնը, Հայաստանի արքան:

ԼԵՕՆՕՐԱ: Ա՛յո՛, ապաւեցաւ նա, հսկան, հզօր թագաւորը և նորանոր յաղթութիւններ տպաւորեին նորան:

ԼԵԻՈՆ: Ուր ես թագր իմ? թագր իմ նախահայրերին ....

ԿՈՍՏԱՆԴ: Համբերութի՛ւն, թագաւոր, խաղաղացրու հոգիդ վրդովմունքը: Մենք պէտք ղգուշութեամբ և խոհեմութեամբ կարգենք քո վախճանը:

ԼԵՕՆՕՐԱ: Բայց ուշացնելը թոյլ չէր տալ Աստուածոյ, որ մինչև խորհուրդը չդիտէ կատարման մահը — մենք պէտք չունէինք աւարտանք:

ՈՒԻՐԵՆ: Բայց ինչպէս? պալատից, քաղաքական դուրս առանց խորհրդատուի հրամանի, առանց նորա հաճոյանալ կենդանի մարդին անկարելի է անցկենալ?

ԼԵՕՆՕՐԱ: Երբ կենդանուն անկարելիէ, այն ժամանակ մեռածները կանցնեն:

ԼԵԻՈՆ: Ա՛յս ինչ է նշանակում?

ԼԵՕՆՕՐԱ: Ինձ սէրը սովորեցրեց քեզ ազատել, թէև վարձուկին, բայց հաստատ կերպով: Լսիր, քո սիրելի ազատարարը, որի առջև ես եմ ընդունելած, երկիւղ վախճանվեցաւ: Ա՛յսօր ննջեցեալին պէտք թաղին սովորութեան համեմատ քաղաքից դուրս: Արժէ միայն դերեզմանատունների դիւաւորին մեր կողմը քաշենք պարդևով, խնդիրով, խոստումով, և ննջեցեալի փոխանակ նա թաղարկին դուրս կանչէ քաղաքից:

ԿՈՍՏ: Գիտեցիկ միտք! Փիլիպպոսին ես եմ առնում իմ վերա համոզելու, և շուտով թագաւորը կթողնէ այս անիծուած Ամասիա: Համաձայն ես թէ չէ, արքա Լևոն?

ԼԵՒՈՆ: Կարելի՞ արդիօք ես, բարեկամ, չհամաձայնվիլ այն գործին, ինչպէս Լեօնօրան մտածեց?

ՈՒԻՐԵՆ: Ուրեմն Աստուծով սկսենք մեր գործը: Դուռ, կատա՛ռնք! գնա այս թուղթին դերեզմանատունները տեսուչն մնա:

ՈՒԻՐԵՆ: Յետոյ, ես կարծում եմ, որ դուռ առնել լաւ կանէիր, եթէ վերառնէիր գնալու, հրամանը ինձ էիր թեզանից առաջ այսօր այստեղից և հասնէիր շուտով Հայաստանը; ասէին, որ զօրքը

պատրաստ լինի Թագաւորին ընդունելու, պաշտպանելու: Ասա նոցա Թագաւորի վախուստի մասին: Մենք այսօր և վաղիւ ամենայն ինչ կ'պատրաստենք: Վաղիւ երեկոեան Թագաւորը (դառնալով դէպի նա) մասկարադ կ'տայ պալատում, որովհետև բազմութեան մէջ և ուրախութեան ժամին առաւել հեշտ կլինի ազատվել և Թշնամիներին խաբել: Իսկ եթէ մեզ այս տեղ մի դործ պատահմամբ կ'կանգնեցնէ և երկրորդ օրին առաւօտ այնտեղ չենք լինի, ժողովը այն ժամանակ քաջ հայերի բոլոր ցրված զօրքերը և ևկ Թագաւորիդ աղատելու:

ԿՈՍՏ: Ճշմարիտ ես ասում, զղուշութիւնը աւելորդ չէ; ես այսօր կ'դնամ, բայց ով կմնայ այսեղ Թագաւորի հետ?

ՌՈՒԲԻՆ: Ես, ես ինքս կ'դնամ Թագաւորի դադաղի եաևից: Ես կ'պահպանեմ.....

ԿՈՍՏ: Ուրեմն տերը մեր հետ, Աչժմ ես դնում եմ փիլիպպոսի մօտ; այս երեկոին ինձ այս քաղաքում չէք դտնի, դնացած կլինիմ և երրորդ օրին կ'սպասեմ ձեզ Հայաստանում:

ԼԵՒՈՆ: Անգին բարեկամներ! ես շնորհակալ եմ ձեզանից: Զեզ Թող Հայաստանը հատուցանէ փոխարէնը: Գիտեմ այսօր դուք ձեր կեանքը ինձ զոհ էք բերում, և ձեր զոհը ընդունում եմ: Որդինների որդինները կ'դնահատեն այդ ձեր զոհը: Իսկ եթէ չյաջողվի մեզ մեր վախուստը—միասին կ'կորչինք: Ձեր անուններըը կմնան անմահ: Զեզ կ'յիշեն դառնապին արտասուքով և բարի քաղաքացին և հաւատարիմ բարեկամը և իմ սիրելի հպատակները, երբ նոցա միտք կ'գայ այս աշխարհի մեծութիւնը, ունայնութիւնը և անհաստատութիւնը, երբ նոցա միտք կ'գայ իմ—անբաղդ Թագաւորիս դառն վիճակը: .....Աչժմ պատրաստեցէք վախուստը: (Դուրս են դնում):

(Վարագոյրը իջնում):

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ:

ԲԱԺԱՆՈՒՄՆ II. ԳՆԵՐՁՄԱՆԱՓՈՐ.

Սենեակ փիլիպպոսի տան մէջ, հանգստարանում, սեղան և երկու աթոռներ:

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՒԹ:

ՓԻԼԻՊՊՈՍ (մանում ձեռքին մեծ ցուպ): Ատուած հոգին լուսաւորի! Եհ, ինչ անենք ամենևքեանս մեռնելու ենք: (Կոստանդը բաղխում դուռը): Ով է տեսնես? Մինին նոր Թաղեցի

ահա միւսն էլ գալիս է:

ՓԻԼԻՊՊՈՍ: (կոստանդը մտնում է): Հրամայեցէք; այս ինչ մեծ պատիւ է ինձ, պարոն: Ես մտածել անգամ չէի համարձակվի, որ ազնիւ Հայ մարդը հրամայէր իմ տունը, իմ բնակարանը, ինչին գերեզմանափորի մօտ:

ԿՈՍՏԱՆԴ: Ինչի ես քեզ ընչին կոչում: Թէև քո պաշտօնը նախանձելի չէ....

ՓԻԼԻՊՊՈՍ: Բայց չէ, նախանձել ևս կարելի է պաշտօնիս: Հանդիստ պաշտօն է: Եւ նոքա, որոնց հետ ես այստեղ գործ ունիմ, սովորութիւն ունին, չգիտեմ, թէ վատ թէ լաւ, միշտ լռել: Նոքա բաւական են ինձանից և մինչև այսօրնոյնանից ոչ մին չէ գանգատվել ինձ, որ ես նոցա հետ վատ եմ վարվում: Լաւ տանուտէր եմ! չեմ էլ խնդրում, որ նստէք: Ահա աթոռ, տէր, վաղուց դորա վերա ոչ ոք չէ նստել, և նոքա, որոնք իմ մօտ հիւր են գալիս, միշտ խօսում են իմ հետ պառկած;նստեցէք, պարոն:

ԿՈՍՏԱՆԴ: (նստելով): Շնորհակալ եմ; քո հետ ես կ'կամենայի մի գործի մասին խօսել....ես խնդիր ունիմ, նստի՞ր և դու:

ՓԻԼԻՊՊՈՍ: (նստելով): Ահա, եթէ կամենում էք; եթէ ոչ ես իմ պարտականութիւնը շատ լաւ գիտեմ: Ինչքան բարի էք դուք! Ինձանից առ հասարակ ամենեքեան փախչում են և իմ հետ պատահելով կամ կողքովս անց կ'կենան կամ թէ չէ բոլորովին երեսը շուռ կ'տան:

ԿՈՍՏԱՆԴ: Ինչի? դու արդէն պէտք կ'դաս նոցա անպատճառ գոնէ միանգամ:

ՓԻԼԻՊՊՈՍ: Ահա գործը այդ է: Մահից յետոյ կամ ակամա նոքա իմ հետ պէտք է ծանօթանան և այս է, որ նոցա կենդան ժամանակին հարկադրում էմ ինձանից հեռանալ; ես այն տան դռնապան եմ, ուր նոքա մի օր ակամա պէտք մտնեն: Ես նոցա միտքն եմ բերում մի ճշմարտութիւն, իհարկէ տխուր, որ այն մարդը, որ բռնում է երկրիս վերա մեծ կալվածներ և տեղեր, կ'մտնէ, կ'պառկի գետնի տակ նոյն արկղի մէջ, ինչպէս նա, ով այստեղ ոչինչ չէ ունեցել: Թող նեղ լինի աշխարհս հսկաների և տիրապետողների համար; նոցա ամե-

նեցուն բա ւական տո՛ղ կ՚լինի դնանի տակ:

ԿՈՍՏԱՆԴ : Բայց ամենէքեան չ՚են վախ չուն քեզանից: Ա՛հա ես քեզ վաղուց է ճանանչում եմ և շատ յաճախ խօսում եմ քո հետ:

ՓԻԼԻՊ : Դուք բացառութիւն է՛ք կազմում, պարոն; դուք ուրիշների նման չ՚էք— բայց մեծատուններդը— ինչքան չ՚են սիրում ինձ: Իմ կարծիքով դուք շատ լաւ էք անում, բայց հարցրեցէք այժմ նոցա— կ՚ասեն . սր. Կոստանդը շատ վատ է անում: Ա՛հա այսպէս է ամենայն դրծը աշխարհիս մէջ: Գործը միշտ այնպէս կ՚երևի որ կողմից կ՚նայես: Ես երկրիս վերա ամենայն ինչ և լաւ է և վատ : գուցէ թէպէտ լաւ էլ չ՚է, բայց վատ էլ չ՚է : Բայց ես գալուդ համար շատ շնորհակալ եմ և ձեզ կարողեմ ասել, որ դուք, երևի, մահից չ՚էք վախենում:

ԿՈՍՏԱՆԴ : Չ՚է! մահով ես սովորութեամբ կեանքը վարել :

ՓԻԼԻՊ : Ճշմարիտ է՛ք : Ինչ է՞ մահը? Ո՛չինչ, մեծ, զարհուրելի ո՛չինչ, որ այսօրից ոչնչացնում է ամեն ինչ, ուրումն նա ամեն գործից հզօր է, ուրումն նորա առաջ ամենայն գործ ո՛չինչ է, չնչին է .... բայց ինչ է՛ք կամենում վերջապէս, տէր?

ԿՈՍՏ : Ա՛յս օրերիս Թագաւորի սպասաւորը վախճանեցաւ :

ՓԻԼԻՊ : Դիտեմ, ես այսօր կ՚ընդունեմ նորան իմ մօտ :

ԿՈՍՏ : Դու՞ ճանաչում ես Թագաւորին?

ՓԻԼԻՊ: Նորան ամենայն եմ սեպհական նորան Ամասիա հին բերում դերի բռնված արդէն, և այն էս պատահմամբ: Ինձ ծանրի վերա, առողջ մարդկների փառահեղ հանդէսների վերա նայելը չէ ուրախացնում: Ես չ՚եմ սիրում նոցա երեսը : Կենդանի երեսը փոխուած կան է և մեծ մասով խաբեբա : Ա՛յս երեսի վերա անկարելիէ նշմարել ոչ զգացումը, ոչ բնութիւնը: Ուրիշ է մեռածի երեսը: Մեռած երեսի վերա ես միշտ կարդում եմ բոլոր կեանքի պատմութիւնը: Շատ անգամ երբ բերում են իմ մօտ մեղաւորին և նորա հետ սուրբ հօրնայում եմ նոցա երեսի վերա և սխալվում եմ : Ա՛յն մեղաւորը նայում է իմ վերա սուրբ աչքերով; իսկ հայր սուրբը կարծես մեղաւոր լինի : Ա՛հա դուք օրինակ պարոն; ո՛չ! հաւատացած եմ այս մասին : Երբ դուք կ՚մեռնէք դիւեմ ձեր մարմինը այն երեսը կունենայ, որ ախտաւ, ձեռները խաչած, կ՚ասես աղօթիր այնտեղ և մեր համար:

ԿՈՍՏ : Շնո՛րհակալեմ դերեզմանական անկեղծ խօսքիդ համար:

ՓԻԼԻՊ : Ես սիրեցէք ձեզ շնորհակալութիւն անում, որ դուք

դերեզմանատուն շատախօսութիւնը լսելէք այդպիսի ողբմածութեամբ : Ե՛ւ մինչ լուռ եմ և այնոր համար, ներեցէք փոքրինչ միջոց դառած ժամանակին անչափ շատախօս եմ դառնում : բայց դո՛ք թագաւորի վերա դրած հիք կամենում ասել :

ԿՈՍՏ : Դու դիտես, որ մեր թագաւորը սիրում հանապհներ : Երրորդ օրին նա կամենում մեծ մսակարագ (դիմակախաղ) տալ և նորա վերջը աւելի զուարճալի շինելու համար — ահա նա ինչ հնարեց: մեզանից մին — միայն հանապով — կ՛պատկէ դադաղի մէջ, որ դու ննջեցեալ ապատաւորի համար ես պատրաստել և նորան, որը պատկած կ՛լինի այնտեղ կհրամայես հանդարտ պատշաճից դուրս բերել յետոյ··· բայց ինչոր յետոյ հանապից դուրս կ՛գայ, ես յետոյ կ՛պատմեմ, այժմ ես պէտք խմնամ — դու կ՛անես արդիօք մեզ այս ծառայութիւնը, և կ՛օդնես արդիօք մեզ մեր հանապի մէջ ?

ՓԻԼԻՊ : Զարմանալի հանապ է՛ք հնարել : Ի հարկէ, նա թագաւոր է, բայց և թագաւորին վատ է մահի հետ հանապ անել : Սա բոլոր երիտասարդ թագաւորներից հպարտ է :

ԿՈՍՏ : Վերջապէս, ինչպէս ես? կարող ենք մեր յոյսը քո վերա դնել?

ՓԻԼԻՊ : Ուրեմն ես պէտք ձեզ օդնեմ այն հանապի մէջ, որտեղ կենդանին պէտք ննջեցեալի տեղը բռնէ ?

ԿՈՍՏ : Դու հանդիստ եղիր, փիլիպպոս, բոլորը պատրաստ է, մտածված և կարգի բերված, և միայն քո համաձայնութիւն է պակաս մեզ : Բեզ, իհարկէ ծառայութեանդ համար, պարգև կ՛լինի հարուստ, թագաւորական :

ՓԻԼԻՊ : Եւ հանապի համար պարգև թագաւորական : Իհարկէ հանապն էլ թագաւորական է ····· Ջդիտեմ, պատմելեմ արդիօք ձեզ, ինչպէս միանգամ Մեծ Թորոսը, Լեռնի Եղբայրը, ապատեց ինձ չարաչար մահից, որ ինձ վճռելը Յոյնների Ճերակոյսը (сенатъ) : Ա՛յն օրին, երբ հրապարակի մէջ պէտք ինձ կախելէին, մտաւ նա Ա՛մասիա, մեր քաղաքը յաղթանակով : Եւ ներեց ինձ ···· ՈՀ, նա մեծ թագաւոր էր! ես ցաւումեմ, որ նորան չկարողացայ դադաղի մէջ տեսնել : Ինչպէս զեղեցիկ կը լինէր նա այն ժամանակ :

ԿՈՍՏԱՆԴ : Նա յաղթութիւնների ծանր բեռից վաստակած,

պառկեցաւ դադաղի մէջ այս կէտանքից Հանգստանալու։

ՓԻԼԻՊՈՍ։ Ինչով կարողէի եւս, Էնչինս, նորա ողբմութեան վոխարէնը հատուցանել....եւ ահա ժամը եկել է, և ինչ որ կենդանու համար չարեցի ես, ննջեցեալի համար կ'կատարեմ։ Դա-դ ղից նա կ'տեսնէ, որ ես չեմ մոռացել նորա բարերարութիւնը, որ ես եղբօր պարտքը հատուցանում եմ իբր եղբօր։ Տէր, հա-նաքի հետ համաձայն եմ ես. ահա ձեզ իմ ձեռը։

ԿՈՍՅԱՆԴ։ Պատուելի Ծերունի, այս գործի վոխարէնը քեզ Աստուածը կ'հատուցանէ....այս քո գործը մեծ է և գեղեցիկ։

ՓԻԼԻՊՊ։ Բաւական է, ես վճարում եմ իմ պարտքը։ Բայց այ-նու ամենայնիւ ես ձեզ մի պայման կ'առաջարկեմ.—դուք գիտէք, որ մեր ազատ քաղաքը հանաքներ չէ սիրում, մանաւանդ այս-պիսի հանաքներ։— Ուրեմն եթէ ես հանաքիս համար պարտա-ւորված կ'լինիմ վախչել այստեղից—դուք իմ համար գտէք ձեր թագաւորական քաղաքներից մինի մէջ իսկ և իսկ այսպիսի մին պաշտօնը, որտեղ ես կարողանայի խաղաղ վերջացնել իմ կեանքը։ Ուրիշ պաշտօնը ես չեմ կամենում։ Ես շատ սովոր եմ ննջեցեալներին։

ԿՈՍՏԱՆԴ։ Ես քեզ թագաւորի անունով խոստանում եմ բո-լորը, ինչ դու կ'կամենաս։ Այժմ մնաս բարով....իմ համար այժմ ամենայն ինչ պատրաստ է, ես ուղղակի գնում եմ Հայաս-տան։ Ահա դուրս գնալու հրամանը (ցոյց է տալիս թուղթերը)։ Ռոբէնին ասել եմ բոլորը, դու նորա մօտ կ'գնաս և նորան կը-հարցնես; այժմ մնաս բարով....ցտեսութիւն (դուրսէ գնում)։

ՓԻԼԻՊՊ։ Ցկրկին տեսութիւն, պարոն։ Եթէ ես իսկապէս լի-նէի այնպիսի Ցոյն, ինչպէս իւրաքանչիւր Բիւզանդացին պարտա-կան է լինել, պէտք այս հանաքի մասին ասէի մեր խորհուրդին։ Բայց ինձ ինչ? Թէ Ցոյն Թէ Հայ։ Ով են սորա? եթէ ոչ ապա-գա անկենդան մարմիններ։ Մի թէ միևնոյն չէ Հային կ'ապատեմ Թէ Ցոյնին? բայց շատ կարևի է սորանից ես առաւել հանգիստ լինիմ պառկած դադաղիս մէջ (գնում է)։

(Վարագոյրը իջնում է)։

ԲԱԺԱՆՈՒՄՆ III։ Ծամեր (локоны)։

Լևոնի պալատի մէջ պաշտպամբ (галерея)։ Ձախ կողմում ամբիոնի վերա դագաղ; դագաղի մօտ նորա խուփը; մթնանում է։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ։

ՌՈՒԲԷՆ։ (Դիմա՛ւ, և դողինով; հետուից լսւում է ուրախ երաժշտութիւն)։ Դուք, երաժիշտներ, առաւել բարձր զուարճէք; դու անմիտ ուրախութիւն, առաւել տարաճվիր, դու մութ գիշեր շուտ վայր եկ երկրի վերա և մեր թշնամիներից ծածկիր մեր գաղտնիքը։ Բոլորը պատրաստ է կարծում, միայն թէ պահապանները թողնէին դագաղը դուրս տանելու դուռներից, և յետոյ նա անվտանգ կ՚լինի։ Ես վախենում եմ, որ եթէ... Ա՛կամայ սիրտս ահ է ընկնում, դառարկ ցնորք! Ա՛հա և նա—մեր բարի փիլիպպոսը (մտնում է փիլիպպոսը)։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ։

Նոյնը և Փիլիպպոս։

ՌՈՒԲԷՆ։ Բարի է քո գալը, փիլիպպոս! Ինչն ես նեղացած կամ դուցէ մեր վախուստը չէ՞ ուրախացնում քեզ?

ՓԻԼԻՊՊՈՍ։ Չ՚է ուրախացնում! Հարցնում՞ էք։ Ես երբէք չէմ հեռանում բարի դործերից; բայց ա՛հա ինչ եկաւ միտքս այժմ։ Հպարտ հպարտ դոչում ենք բոլորս մե՛ր կեանքի մէջ. լմա՛ն է, լմա՛ն է։ Բայց ինչէ մերը այստեղ? Եւ ով գիտէ թէ մենք չենք զրկվել նորանից, ինչըր ունինք։ Եւ այն խեղճ ողորմելին, որին այս րոպէիս սառն գետնի մէջ թաղելոյ առանց այլևայլ պատւի, կարծում եմ, որ կարողէր հաւատալ լինել, որ այս դագաղը նորան յաւիտեան կ՚մնար; բայց չէ՛, և այստեղ խաբվեցաւ ողորմելին։ Դադաղը պէտք եկաւ կենդանի թագաւորին։—Խեղճ սպասաւոր, տուր և այդ վերջին ունեցածը թագաւորին, և ինքդ պատկիր դերեզմանի մէջ, ինչպէս գիտես։

ՌՈՒԲԷՆ։ Բարեկա՛մ, բայց եթէ նա սորանով ազատում է թագաւորին։

ՓԻԼԻՊՊՈՍ։ Ի հարկէ, այդպէս է, բայց այնուամենայնիւ ննջեցեալին խղճում եմ։

ՌՈՒԲԷՆ։ Ես հաւատում եմ, դու ննջեցեալների հետ բարե-

կամ ես, բայց մենք ամենևքեան սիտաքէ շնորհակալ լինինք քե-
զանից, որ դու այդպիսի լուռ մունջ և սառն հատարակութեան
մէջ, չես մոռացել կենդանիներին սիրել: (Յոյժ տալով նորան քը-
տակը): Վերատ ահա, բարեկամ!....բայց այս պարզևե չէ. միայն
ձանապարհի համար տող: Մենք քո հետ Տարտուֆ կ'տեսե-
լինք կրկին:

ՓԻԼԻՊՊՈՍ: Կարելի է հա, կարելի է և չէ: Ես ոչինչի վերա
չեմ կարող հաստատ յոյս դնել: Բայց արդէն ժամանակ է, և
աշխատ եղնք, խնդրում եմ, Թատաւորին ասելու, որ ձերվեմա-
նակորներս պատրաստ են:

ՈՒԻՆՆ: Ես գնում եմ նորան ասելու: (Դուրս է գնում):

ՓԻԼԻՊՊՈՍ: (Մօտենալով դատաղին): Ցիրուսի Թատաւորի հա-
մար այս դատաղը շատ շքեղ չէ; նորա և գեանի մէջ պատիւ
ունէին ուրիշների առաջ: Բայց մի ինչ ես միայն կցանկայի հարց-
նել ձերվեմնատան սառնարանի բնակիչներից, որոնք սպասում
են մեզ սենեակ. սակայն դատաղի մէջ ասելի հանդիսատ է ար-
դեօք մեր մարմինը, թէ մի քանի կտոր տախտակների մէջ?...
Բայց այս դատաղը Թատաւորի համար վերին Թիւն է և Ա.Մասիսի
պատերից դուրս նորին մեր ննջեցեալը յարութիւն կ'առնէ, սպա-
սում Թիւն կ'տանայ և կարող վերժիանալիր լինել իւր անողոք
Թշնամիներից... Մօտենում են այն րոպէին... Ա.կամա սիրտս Թու-
լանում երկիւղից: Ինչ կլինի? եթէ..... բայց հետու խնամից
դատարկ զգուշութիւններ: Նա հարկաւոր է իւր հայրենիքին և
Ա.առուած կամենում հօտին իւր հովիւը տալ:

Խնամից Յոյների ոչ մի անպարտարու Թիւն չէ ծածկվել, մա-
նաւանդ որ յունական օրէնքի պահերից ոչ մին չէ ծածկվել լին-
ձանից: Ա.յդ զգուած մարդիկ իւրեանց վերջին լուռ և մունջ դան-
դատը բերելին միշտ իմ մօտ; և ես ընդունելեմ միշտ... բայց
ահա Թատաւորը գալիս է... Ուրեմն ես կ'գնամ այժմ և կ'բե-
րեմ իմ ձերվեմնատիրներին (դուրսկ գնում):

ՉՈՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ:

Լևոն և Լէօնսօրա, (դուրս են գալիս հակառակ դուռներից;
Լէօնսօրան աղջկի շորերով):

ԼԵՒՈՆ: Յանկալի բոպէն հասնում է... Ընդէն բարեկամ իմ
դու լինձ բաց տեղիը բանտիս դուռները և մենք միասին կ'փախ-

չենք այս տեղից:

ԼԷՕՆՕՐԱ: Չ'կ, Թագաւոր! ես մնում եմ այստեղ:

ԼԵՒՈՆ: Դու մնում ես?.... և առանց ինձ, առանց Լեոնի, ոչ!.. Աւսա, որ ես քո լեզուը չ'լսեցի, որ ես քո ասածը չ'հասկացայ:

ԼԷՕՆՕՐԱ: Ես մնում եմ, ես պէտք մնամ; թէև քո հետ բաժանուել դժուար է ինձ և ծանր:

ԼԵՒՈՆ: Բայց ինչ կարող է քեզ այստեղ պահել? Չ'գիտեմ բոլորովին:

ԼԷՕՆՕՐԱ: Պարտականութիւնը, պատիւը և աշխարհի կարծիքը: Այս քո առանձնութեանդ մէջ, ուր քո հետ կին միայն քո երկու բարեկամները, և գիտէին իմ գաղանիքը, ես հանգիստ կարողէի քեզ սիրել, չ'վախենալով բոլորովին մարդկային զրպարտութենից: Բայց աշխարհի մէջ, ամենեցուն առաջ, կարող եմ արդեօք ես թագցնել իմ սէրը և մանաւանդ աղջիկ լինելս, և ազատել պատիւս անարգանքից և նախատինքից?

ԼԵՒՈՆ: Ես կ'տեսնեմ, ով կ'համարձակվի նախատել քեզ— բարեկամիս և ամուսնիս:

ԼԷՕՆՕՐԱ: (Ընկնում նորա ոտներին: Թագաւորը բարձրացնում է նորան): Ոհ, լաւ ձայնիր, չէ.... ես անարժան եմ բարձր ամուսնի անունին: Որ ես մանկուց լինիմ քո պայծառ կոչման, հաղնեմ քո թագը, նստեմ գահի վերա, Ռուբենեան տունից Հայաստանի թագաւորների վառահեղ գահի վերա, ես անյայտ և չնչին որբս, ես— քո բանտապետների աղջիկ.... Ջէ, ոչ երբէք.... Այս անարժան կապով դու կարող ես քո մերձաւորների և հպատակների մէջ արհամարհանք ձգել դէպի քեզ; բայց նոցա սէրը քեզ անշուշտ հարկաւոր է: Քո անհատական պակսը կարող է խանգարեցնել թագաւորիդ անունը, բայց դու այդ անունը պէտք մաքուր ընծայես մի կալվածատէր իշխանուհուն կամ մի ուրիշ թագաւորական աղջկին: Նա քեզ պարգև կ'բերէ և քաղաքներ և բերդեր, և ինքնակալ հօր օգնութիւն և նորա բարեկամութիւն: Իսկ ես....ինչ կ'բերեմ քեզ պարգև? Տառապանքից չարչարուած սիրտը և աշխարհից դատապարտուած և ապականուած կնքը:

ԼԵՒՈՆ: Ոհ, Լէօնօրա, դու ինձ չես սիրում:

ԼԷՕՆՕՐԱ: Ես չեմ սիրում.... ես որպէս թէ կարող էի ապացուցանել իմ սէրը քեզ հնազանդվելով, բայց միթէ ես չեմ

ցոյց տալիս սէրը, հրաժարվելովդո գահից? Ես չեմ սիրում քեզ, հա, եթէ ես յանձն առայ քեզ ուրիշ աղջկին տալ! ՈՀ! խղճացիր, մի՛ չարչարիր ինձ կատածանքով: Իմ դրութիւնս և առանց այնոր զարհուրելի է: Ես պէտքէ մտածեմ աւելն րոպէ, թէ Լևոնը մոռանում էր ինձ ուրիշների գրկում; նա պվարճանում ուրիշի սէրով և գովանքով: Լևոնի սիրտը ուրիշնէ պատկանում: Երազում Լևոնին առաջ է գալիս ուրիշ աղջկը—նա, նա և միշտ նա, Բոդորը այն աղջկին, հանգիստ, հոգս, խնամատարութիւն, բայց ես, ես պէտքէ տխրեմ, չարչարվիմ, յուսահատութեամբ ինձ մաշեմ.....ՈՀ, Լևոն! և արդեօք ես չեմ սիրում քեզ!

ԼԵՒՈՆ: Բայց եթէ դու ինձ սիրուհես, ինչի բաժանվինք ուրեմն միմեանցից յաւիտեան? Ջ'էկ, դու իմ հետ կ'գաս, այնպէս չէ? Աւա՛, արդէն սորանով կամենում էիր դու ինձ վորձել, սրտիս մէջ նորէն բորբոքել սէրը և կասկած գցել: ՈՀ, էօնօրա, ես քեզ սիրումեմ, սիրումեմ այնպէս, ինչպէս աշխարհիս վերա չեմ սիրել ոչ ոքին: Դու գիտես իմ սէրը: Դու կ'համաձայնվիս; դու պէտքէ համաձայնվիս:

ԷՕՆՕՐԱ: Մի՛.....մի՛.....իմ Լևոն.....իմ Թագաւոր, մի՛ քանդեր իմ դիտաւորութիւնները և մի՛ զրկեր ինձ հաստատ կամքից...

ԼԵՒՈՆ: Եւ ես պէտքէ քեզ թողնեմ, որ դու կեանքը անցկացնես յուսահատութեամբ, տրտմութեամբ, չարչարանքով..... Ա դու ինքդ ասացիր ինձ,

ԷՕՆՕՐԱ: Ես, ոՀ չէ! կարող եմ արդեօք ես տրտմել, երբ կ'իմանամ, որ դու երջանիկ ես, որ քո աստղը բարձրացել երկրիս վերա, որ դու նորէն վառաւոր ես, հզօր, որ քո առաջ թշնամիները խոնարհացել են, որ բոլոր քո կալվածները յետ դարձան քեզ...ՈՀ, ինչքան կ'պարծենամ ես քեզանով, երբ իմ միայնակութեան մէջ համբաւներ կ'պատմեն ինձ քո մասին, քո հիանալի յաղթանակների վերա, նոր յաղթութեան համ պատերազմի վերա! Երբ իմ ականջս կ'հասնէ քո վառքի ձայնը. «Մեծ է մեր Թագաւորը, Լևոնը մեծ է», այն ժամանակ աչքս կը լցվի ուրախական արտասուքով, սիրտս կ'ղղայ երջանկութիւն և ես հոգուս մէջ ծածկելով ուրախութիւնը, կ'ասեմ համարձակ. ինչպէս մեծ է նա, որին ես սիրուհէի:

ԼԵՒՈՆ։ Ա՛խ, Լէօնօրա՛։ ինչի՛ տրտմութեամբ չարչարվել ? Մեզ չէ պէտք, մենք չենք կարող բաժանվել։

ԼԷՕՆՕՐԱ։ Մեզ պէտք է և կարող ենք—և քո հետ գնալ ես չե՛մ կարող, չե՛մ համարձակվում...

ԼԵՒՈՆ։ Դու չես կամենում իմ հետ գնալ? Այն ժամանակ ես ինքս հարսիս համար կ՛գամ պատերազմով Ամասիայի պատերի վերա և կ՛ալատեմ քեզ իմ արիւնովս։ Թո՛ղ իմ ընդդէմ վերկենայ բոլոր աշխարհը; քո ոտների տակ կ՛դնեմ ես սէրով զինուորի սուրը և Թագաւորի գահոյքը։ Եւ իմ թշնամիներին կ՛առաջարկեմ հպարտ պայման. կամ ընդունել մահը կամ տալ քեզ։

ԼԷՕՆՕՐԱ։ Չ՛է, չէ, մի՛դար, Թող ինձ հանգիստ մեռնեմ։

ԼԵՒՈՆ։ Չ՛է. Թո՛ղ իմանայ աշխարհը, որ դու, Լէօնօրա՛ արժանի ես Թագաւորին, և որ քեզանից աղնիւ չ՛կայ աշխարհիս մէջ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ։

ՌՈՒԲԷՆ։ (Մտնում է)։ Ինչպէս? դեռ դու, Թագաւո՛ր, դադարում չես? փիլիսպոսը շուտով կ՛գայ։

ԼԵՒՈՆ։ Ա՛յս դու ես, Ռուբէն?....իմ քաղցր Լէօնօրաիս հետ ես բոլորը մոռացայ ...Բայց ուր է նա? ա՛! ա՛! ա՛! Ահա մարդիկների յաւիտենական անկողինը. ահա մեր վերջին բնակարանը... շքեղ չէ, բայց հանգիստ է. Լէօնօրա, մնացիր բարով, թէև փոքր ժամանակով։ Բարի, սիրելի բարեկամ իմ, շնորհակալ եմ քեզանից (առնում է Լէօնօրաի ձեռը) այն կարճ րոպէների համար, որ դու իմ տխուր կեանքի մէջ սերմվեր քաղցրացրիր։ Մնացիր բարով! ողջոյն քեզ! (Համբուրում է ձեռը)։ Դու պայծառ ճառագայթ, որ վայելեցար ցաւիս մէ՛ծութեամ; դու լուսաւոր աստղ, որ ծագեցար իմ մառախլապատ երկնքում; դու փարթամ ծաղիկ, որ բուսնվեցար բանտիս պատերում; դու վերջապէս հրեշտակ իմ, կեանք իմ, ապառնի երջանկութեանս քաղցր նշոյլ իմ։ Մնացիր բարով։

ԼԷՕՆՕՐԱ։ Մնացիր բարով, Թագաւո՛ր իմ! և եթէ նախանձմունքը վճռեցէ մեզ չտեսնվել աւելի այս կեանքում, այնտեղ, այնտեղ, առաւել լաւ և երկնային աշխարհում—ես անշուշտ առաջինը քեզ կ՛հանդիպեմ։

ՌՈՒԲԷՆ։ Փիլիսպոսը շուտով կ՛գայ, Թագաւո՛ր!...

ԼԷՕՆՕՐԱ։ Ինչի՛ ես մեր միտք բերում մեր մեկնութիւնը? Թող

ինձ զվանամ վոքը ինչ նորան տեսնելով, նորան լսելով վերջին անգամ: Ա յստեղից ես դուրս չեմ դնայ, մինչև դագաղը խուփը չ'ծածկէ նորան ինձանից յաւիտեան:

ՌՈՒԲԵՆ: *Ժամանակ է, ժամանակ է:*

ԼԵՒՈՆ: (*Բարձրանալով ամբիոնի վերա, հպարտ ձայնով*): *Ա յժմ ընդունիր ինձ, սառն դագաղ, և ծածկիր ինձ քո զարհուրելի գրկումդ: Ես սրտկումեմ քո մէջ խեղճ գերի, բայց վեր կ'կենամ թագաւոր...* (*կամենումէ սրտկել դագաղի մէջ*):

ԼԷՕՆՕՐԱ: *Ո՜հ! սպասիր: Ես գգումեմ արիւնս սառել է երակներիս մէջ... վերջին համբոյր... և խնդիր... հա, դու չ'ես մերժի ինձ?...*

ՌՈՒԲԵՆ: (*Խուփը բռնելով*): *Ձայն եմ լսում... շուտով թագաւոր!*

ԼԵՒՈՆ: (*Վեր բարձրանալով դագաղի մէջ*): *Սպասիր, բարեկամ... դու, Լէօնօրա! կամենումէիր ինձանից խնդրել:*

ԼԷՕՆՕՐԱ: *Հա, մի՛ մերժեր. մեր ցաւալի սէրի, յիշատակի համար, մեր թշվառ մեկնութեան յիշատակի համար—տուր ինձ քո մի մազի ծամը: Ես նորան կ'պահեմ իմ խեղճ սրտիս վերա և ամեն օր կ'համբուրեմ և ամեն օր կ'ծածկեմ նորան դառն արտասուքով.... Մին... թագաւոր իմ... Լեւոն!.. բարեկամ իմ, առանց նորան ես կ'մեռնեմ.. իմ կեանքը այժմ կախվածէ ծամից, հաւատա՛ ինձ: Դու ինձ կ'տաս, այնպես չէ?*

ԼԵՒՈՆ: *Ուրախութեամբ:*

ԼԷՕՆՕՐԱ: *Ես ինքս կ'ընտրեմ...*

ԼԵՒՈՆ: *Ինչպէս կամենումես:*

ԼԷՕՆՕՐԱ: *Ուրբէն, տուր ինձ քո թուրը....*

ՌՈՒԲԵՆ: *Երդվումեմ, Լէօնօրա, դու կ'կորցնես թագաւորին:*

ԼԷՕՆՕՐԱ: *Կրկին!...* (*առնումէ նորանից թուրը*): *Սա իմն է, ալիսաւոր այս ծամը: Իմ Լեւոն, ընդհակառակ...*

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՒԹ:

Փիլիպպոս և չորս դերասանուհիներ: Փիլիպպոսը բաց է անում պուռը:

ՌՈՒԲԵՆ: *Աստուած իմ! գալիս են...* (*Շուտով ծածկումէ դագաղի խուփը; խուփի տակից կախված մնումէ Լեւոնի ծամը, որ Լէօնօրան կամենումէր կտրել: Լէօնօրան զգումէ թուրը, լաւ կտրիչ է և կանգնումէ ամենայնեան եանելից*):

ՓԻԼԻՊՊՈՍ: (*Տեսարանից դուրս*): *Ա յստեղ, բարեկամներ:* (*Մըտ-*

նում)։ Պատրաստ ե՞ս.....(Գերեզմանափորները մտնում են)։ Ահա ննջեցեալը! ղդշշ..Տարէք նորան քաղաքից դուրս; և ձեզ, պատրոնները, կ'ևնդրեմ արգելք չդառնալ մեզ տխուր հանդիսին։ Գնացէք! Տերը ձեր հետ, դուք ինչ գործ ունիք ննջեցեալի հետ։ (Ուրիշները դուրս ե տանում Լէօնօրային, որ կամենում ընկնել դագաղի վերա)։

ԱՌԱՋԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ։ Ինչի են նորա այսպէս նեղանում? կարծես ննջեցեալը երևելի մարդ էր, և նոցա հաւասար չէր, բայց հասարակ սպասաւոր։

ԵՐԿ. ԳԵՐԵԶՄ.։ Նորա վերա ահա գրեթէ լալիս ես։

ՓԻԼԻՊ։ Ինչ էք զարմանում? Ի հարկէ չայատանում թագաւորի գահի մօտ սպասաւորի վերա մէկ ոք ուշադրութիւն էս չէր անի, բայց այստեղ, գերեզմանի մէջ, ակամա լայ կ'լինին, երբ և մի բառ ասելու չունին մարդ։

ԱՌԱՋ.ԳԵՐԵԶՄ. Ա.յս ինչի լեռնը չեկաւ իւր սպասաւորին ողջոյնը տալու։

ՓԻԼԻՊ։ Ա.յժմ նա սորա համար չէ պարապ; նա տօնախմբութեանմէջ ուրախանում, բայց այնու ամենայնիւ, նա մեզ չէ մոռացել... Ահա այստեղ ձեզ էս կայ ձեր բաժինը..... (Հանում քսակը)։

ԵՐԿ. ԳԵՐԵԶՄ։ Ահա այդ լաւ գործ է; դորա համար մենք նորանից շատ շնորհակալ ենք։

ՓԻԼԻՊ։ Ա.յդպէս է, միայն կարելի է ձեզ ամէն է մեր հայրենիքի թշնամուց վողը առնել։

ԱՌԱՋ։ ԳԵՐԵԶՄ։ Փոյթ չկայ, տուր այստեղ։

ԵՐԿ։ ԳԵՐԵԶՄ։ Ինչ կայ?

ԱՌԱՋ։ ԳԵՐ։ Ոսկին ամեն տեղ միևնոյն է։

ԵՐԿ ԳԵՐ։ Ճշմարիտ է։

ՓԻԼԻՊ։ Ինչպէս կամենում էք, բայց ճշմարիտ ասեմ, ես վախենում եմ այս մեղք է. Թագաւորը—և Հայր է և մեր թշնամի։

ԱՌԱՋ։ ԳԵՐ։ Փոյթ չկայ; քո հոգու վերայից մենք կ'լվանանք այդ մեղքը, մեր վերա կ'առնենք։

ՓԻԼԻՊ։ Ա.յդ ժամանակ ինչպէս կամենում էք։ Միայն լաւ տեսէք։ Աստուած տեսնում է, ես այստեղ արդար եմ; այժմ առէք բարձրացրէք դագաղը, բայց զգոյշ....

ԱՌԱՋ։ ԳԵՐԵՋ։ Է՛հ, ննջեցեալը ինչ գործ ունի սորա մէջ։ Երևի նա չէ պահանջում, որ մենք նորա հետ վարվինք, ինչպէս կենդանու հետ։

ՓԻԼԻՊ։ Չէ պահանջում? և դու հաւատացած ես?

ԱՌ. ԳԵՐ։ Ննջեցեալներին ոչինչ չէ հարկաւոր .... և իրենց նեղ բնակարանում նոքա ոչինչ չեն ցանկանում։

ՓԻԼԻՊ։ Որտեղից գիտես? դու երազում ոչինչ չես ցանկանում մինչ? Մահը քուն չէ մինչ? Սառն անկողնի մէջ գուցէ միևնոյն երազ կ'տեսնվի, ինչպէս ջերմ անկողնի մէջ։ Ինչ ենք խօսում?—Շուտ ձեր բանին—և Աստուծով ճանապարհ բռնկէք։ (Գերեզմանափորները բարձրացնում են դագաղը)։ Ահա այդպէս; և ննջեցեալին ցանկացէք բարի ճանապարհ և ուրախ յարութիւն։ (Ցածր ձայնով)։ Աստուած, դու օգնի՛ր մեզ թաղելորին ազատել։ (Գնում են և տանում են դագաղը, և երաժիշտները ածում են ողբալի ձայն)։ (Վարագոյրը իջնում է)։

Փոխադրեց Ս։ ՍՏԵՓԱՆԵ։

Հիւանդ, թշուառ, յուսահատված,
Ես օրերս եմ հաշվում,
Անհառաչանք և անտրտունջ
Ես իմ խաչըս եմ տանում։
Իմ վիճակիս դառնութիւնը
Ես ոչըքին չեմ ասել,
Եւ իմ խաչիս ծանրութիւնը
Ոչըքին չեմ ցոյց տըվել։
Բայց աչքերըս արտասուքով,
Գլուխս ծանր քարի պէս,
Քանի դիշեր լացեմ եղել...
Եւ ասել եմ ես այսպէս.
Թող վիճակս ինձ չարչարէ,
(Դիմանալուն սովրել եմ)
Միայն ինձնիցդ թող չվնէ
Ինչ որ սրտով սիրել եմ։
Բայց չէ. այն էլ ինձնիցդ առան;
Ես չեմ տալ—խլեցին։

Մէկին կեանքիս մէջ սիրեցի.
Այն էլ առան թաղեցին:
Վնաս չկայ. շատ ղրկեցին,
Էլի թող ղրկեն;
Միայն իմանայի թէ ինձ
Ջո մօտ կ'թաղեն.
Այս չար վիճակս օրհնելով,
Ես հոգիս կ'տամ;
Գերեզմանիդ մօտ, փէվէլչան!
Գուցէ դնջանամ:

ՎՇՏԱԼԻ.

The Friendship. (ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ). *Բարդմ.*

Չէ...բաւ է. չեմ գնայ և չեմ հնազանդվի,
Սառն հպարտութեան չեմ տայ յաղթանակ,
Եւ թող չարչարվիմ իմ ցաւով, վիշտով.
Կամքով, կասկածով և սեաւ մտքերով,
Բայց չեմ տեսնի ես նորան աւելի
Եւ չեմ տայ նորան վերաս ծիծաղել.....
Չուր խօսքեր...միայն մի հայեացք, մի բառ
Եւ մի ձայն նորա—հանդարտ բարկութիւն.
Սիրտս պատրաստ է նորան ճշմարտել;
Նորա սաստիկ խօսք և հպարտ հայեացք
Երևումեն ինձ քաղցր և քնքոյշ....
Նորէն ես ուրախ, նորէն երջանիկ,
Նորէն հաւատալ սկսումեմ ես:
Չեմ տարակուսում ես այնուհետև;
Մանուկ մտքերիս չկայ նորէն վերջ,
Եւ ինչ փոյթ, թէ նա սէրով կամ հպարտ
Ակնարկումէ ինձ. նորէն սիրելի
Տան մանուկն առաջ կանգնումէ իմ կառք:

ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԱՐԵԳՐՈՒԹԵՆԻՑ (1)։

Թէև օրագրիս առաջարկված №№-ի մէջ ներկայացրած է նշանաւոր կրիտիկական յօդուածը, բայց այն համարելով ուսումնական յօդուած, մենք մեր կողմից, որպէս ժամանակակից տարեգրող, չենք կարող չասել մեր կարծիքը այդ յօդուածի մասին։ Մենք ևս կարդացինք յիշված յօդուածը, որի անունը այսպէս է ռուսերէն. «По поводу Зейтунскихъ Армянъ и колонизаціи Кавказа» (Զէյթունեան Հայերի և Կովկասի գաղթականութեան պատճառով)։

Յօդուածը ստորագրել է Հայերի մէն պ. Քանանովը։

Հարց. Ինչ կայ յօդուածի մէջ? Պատասխան. յօդուածի մէջ շատ, շատ ինչ կայ, այնպէս որ մեր օտարերկրեայ հայրենակիցները չեն կարող երևակայել անդամ, թէ այստեղ ինչ հրաշներ են կատարվում Հայերի ձեռով։ Թող կարդան և լսանան։ Յօդուածի առաջին մասի մէջ պ. Քանանովը կամենալ է նկարագրել Հայերին և փոխ է առնում պ.պ. Դիւլօռիէի և Լանդուայի գրվածներից տեղեկութիւններ Հայերի մասին և առաջարկում է ռուս ընթերցողներին։ Երկրորդ մասի մէջ նա յայտնում է իր անբաւականութիւնը Կովկասի կառավարիչներից, որոնք վարվելեն մինչև այսօր ոչ—իրաւացի տեղացի Հայերի հետ.... Երրորդ մասի մէջ պ. Քանանովը առաջարկում է ռուսական տկուրեան հոգալ Զէյթունեան Հայերին գաղթելու մասին, որովհետև, ասում է պ. Քանանովը, այդ ազգը կարողէր բոլոր իր յատկութիւններով լինել Թուրաստանի մեծ կոչման ամենալաւ գործիք Կովկասի մէջ.....

Միևնոյն ժամանակում նա խորհուրդ է տալիս Զէյթունեան Հայերին թողնել իրենց տեղը և բնակութիւնը, իրենց ազատ «աղքատ» (հողվինակի խօսքով Տաւրոսեան սարերը և գաղթել դէպի Կովկասի բարեբեր սարերը։

Այս անդամ թող մեր ընթերցողները չսպասեն մեղանից ոչինչ կարծիք։ Որովհետև եթէ մենք խօսելու լինենք, կարելի է այնպէս պատահէր խօսակցութիւնը, որ չասերը դայթակղէին։ Ուրեմն մենք չենք ասի մեր կարծիքը. մի գուցէ սպասը զայրանան... թող իւրաքանչիւր Հայն ինքն կարդայ այս մեր խօսքերը և ամբողջապէս հասկանայ պ. Քանանովի ասածը (2)։

---

(1) Որովհետև ժամանակակից Տարեգրութիւնը այս անդամ չկարողացաւ ամբողջապէս տալվել, ուստի ընթերցողներիս տեղեկութեան համար այնտեղից հանեցինք այս փոքրիկ յօդուածը։

(2) Այս №№-ի մէջ տալու համար պատրաստվել էր ուսումնական կրիտիկա պ. Քանանովի յիշված յօդուածի վերա, բայց խմբագրութենից բացորոշին անկախ պատճառներով, դեռ ևս յետաձգվում է յիշված օգտակար յօդուածի հրատարակումը, ինչպէս և շատ ուրիշ յօդուածներ.....

Խմբագր։

Ծանուցմունք Խմբագրութեան կողմից:

Հարկաւոր ենք համարում ծանուցանել մեր ընթերցողնե-
րին, որ մենք, սկսելով գործը, կարծում էինք շատ բարի գործեր
առաջացնել մեր ձեռնարկութեամբ, մանաւանդ նշանակելով
օրագրի գինը 5 մանէթ: Կարծում էինք թէ կարողանալու ենք
առաջարկել մեր ստորագրողներին աւելի քան խոստացել էինք
մեր ցայտարարութեան մէջ և թերթերի քանակութեան և
նիւթերի բովանդակութեան մասին: Մեր խոստացվածը 5 եր-
կու թերթ, երբեմն աւելի, մինչև երիք թերթ: Մենք կարծու-
մէինք, թէ ստորագրողների թիւը հնար կ'տար մեզ աշխա-
տեցնելու մեր գործի զանազան կողմերի վերա ուրիշ գործոյ
ձեռներ և ձեռք բերելու զանազան գրողների գեղեցիկ յօդված-
ներ, վճարելով նոցա առանձին պայմանով, նոցա արժանաւորու-
թեան համեմատ, բայց ստորագրողների ներկա թիւը այնպիսին է,
որ կարողանալու է հազիւ—հազ ծածկել խմբագրական տարեկան
ծախսեր, տպելով ամիս ամիս միայն խոստացված երկու թերթը
և այն սեփական աշխատութեան գործերից: ... Մնալով այս
պայմանների մէջ, խոստանում ենք կատարել այն, ինչ միայն
հնարաւոր է այսպիսի ծանր գործերի մէջ միակ մշակին սորա
ամենաջերմ աշխատութեամբ: Թէև այժմ այս այսպէս, բայց
մենք չենք տարակուսում բոլորովին: Սիրելով մեր գործը, կար-
ծում ենք որ ժամանակով գուցէ ստորագրողների թիւը հնար
կ'տայ մեզ հրատարել մեր գրողներին աշխատակից լինելու մեր
գործի մէջ: Մեր օրագիրը, թէև հանգամանքներից հարկա-
դրված, սակաւաթերթ է, այնուամենայնիւ առնում ենք մեր
վերա համարձակութիւն յուսալու, որ պակասելու չէ օգուտ
բերելուց իւր կարդացողներին, կարելութեան չափ: Մեր օրա-
գիրը կարող չէ լինել ոչինչ կերպով հասարակաց անորոշ ըն-
դունարան; մեր օրագիրը ունի իւր նպատակ, դէպի որը պիտի
դիմէ անծուռ ճանապարհով; մեր օրագիրը ունի իւր ուղ-
ղութիւն, որ կարդացողներին ցոյց կ'տայ ժամանակը; մեր օրա-
գիրը ունի իւր լեզու: Ուստի և նման պատճառներով կրկնում
ենք— մեր օրագիրը կարող չէ լինել հասարակաց, ամբոխա-
կան ընդունարան: Յօդվածները պիտի տպվին մեծ ևմեծ ըն-
տրողութեամբ, լաւերի մէջ ընտրելով լաւագոյնը:

Յանկանալով գործ ունենալ ազնիւ և իմաստուն հայերի հետ, մենք կարող չենք նոյնպէս ոչինչ կերպով՝ անարժան համարելով և աւելորդ, վիճել այս կամ այն անձնաւորի կամ գրվածների հետ առանց նպատակի, առանց ուղղութեան, առանց մտքի և առանց լեզւի: Այդ ասպարէզը թողնում ենք ցանկացողներին: Մեր կարդացողները արդէն կ'տեսնէին — թէ ինչ կերպով կամենում ենք նշանակել բառերը. «գրել այնպէս, ինչպէս խօսում ենք, և խօսել այնպէս, ինչպէս գրում ենք; գրել այնպէս ինչպէս արտասանում ենք, և արտասանել այնպէս, ինչպէս գրում ենք», ահա այն մեծ, բարձր և ճշմարիտ սկիզբը, որ քարոզում ենք և որին կամենում ենք հետևել մենք: Այս պահանջով մեր կարդացողները կ'տեսնեն, որ դժվար բառը մենք չենք գրում դժուար, ինչպէս գրվում է մինչև այսօր; գրում ենք գրվել և ոչ գրուել: Արդարև, ինչ հիմով գրելենք մենք մինչև այսօր դժուար (джyар djouar), երբ կարդում ենք դժվար (джвар, djvar)? Հանձնելով այնոր վերայ, որ հին ձևը դժվարացնում է ընթերցանութիւնը և տպագրութիւնը, գործ դնելով նոր ձևի մէն տառի վոխանակ երկու տառեր: Մեզ հարկաւոր է ազատ մնալ յամառ հնաոճութենից, այնպիսի հնամոլութենից, որ բոլորովին կորցրել է իւր նշանակութիւնը նոր ժամանակի համար, բացի սորանից, որովհետև մենք պիտի միշտ գործ ունենանք եւրոպական լեզուների հետ, մանաւանդ թարգմանութիւնների ժամանակ, հարկաւոր համարեցինք ընդունել անշուշտ այն կետադրութիւնը, որ պակաս է հայկականին և որ եւրոպական լեզուների մէջ ունի իւր մեծ նշանակութիւն: Այս կետերը սոքա են «; , ? , !» (միջակէտ — ստորակէտ, հարցական և բացագանչական); թարգմանելով հայերէն եւրոպական միտքը, մենք կարծում ենք — այսպէս ազատ է չկարծել միայն անիմաստը — հարկաւոր է այդ մտքին հաղորդել անշուշտ այն նշանակութիւնը, որ ունի նա թարգմանվող լեզւի մէջ: Իսկ փոխելով կետադրութիւնը, անհնարին է այս այսպէս կատարել:

Մեր նորաձևութիւններին կարող են միայն ընդդիմանալ այնպիսի հնապաշտներ, որոնք չունին ոչինչ հասկացողութիւն, թէ

լինչ է նշանակում ժամանակի պահանջողութիւնը: Կրկնուենք, մեր խօսքը և գործը մտադրել ենք կատարել իմաստուն մարդիկների համար, և միայն.

Մեր օրագրի խմբագրութիւնը յայտնում է իւր ընթերցողներին, որ օրագրիս տպագրութիւնը սկսվեցաւ սլ. Էնֆիաճեանի տպարանում յունվար ամսին և որովհետև տպարանի մէջ ցանկութիւն կար գործը աւելի ուշնենալու. քան թէ ֆիզիկական կարելութիւն կար կատարելու, ուշադիր լինելով տպարանի և նորա մէջ ծառայողների պայմաններին, մեր գործը ուշացրեցին տպարանի մէջ, մեր մեծ անբաւականութեան համար, մինչև ահա ապրիլ ամիսը: Թիֆլիսի մէջ մենք չկարողացանք ուրիշ տպարան գտնել, մեր գործի կէսը գոնէ այնտեղ տպելու համար(1). Մենք ցանկանում էինք անշուշտ հրատարակել օրագիրը գոնէ մինչև ժամանող ոծները, բայց եթէ կամեցել էինք տպել բոլորը, ինչը պատրաստված էր այս № №-ի մէջ տպելու, այն ժամանակ կարողանալու չէինք կատարել մեր ցանկութիւնը — հրատարակել օրագիրս ոծներից առաջ. Ուրեմն յետաձգելով այժմ Ջամանակակից Տարեգրութեան և Մանրալուրերի տպագրութիւնը, խոստանում ենք անգամ ներկայացնել ընթերցողներիս յետաձգվածը:

Օրագրիս խմբագրութիւնը յայտնում է, որ նա պատրաստ է տպել ամեն վայելուչ կրետիկա օրագրիս թէ լեզի և թէ նորա մէջ բովանդակված յօդվածների վերաբերեալ այսպէս բառին բառի հետ և մտքին մտքի հետ վիճելու, որ այնուհետև ծագվի և առաջանայ գործը.

Մեր Ցայտարարութեան մէջ, մենք խոստացել էինք սկսել օրագիրը 1864 տարու հոկտեմբեր ամսից, համարելով օրագրիս տարին հոկտեմբերից հոկտեմբեր: Բայց նշանակված ժամանակին չաջողվեցաւ մեզ սկսել գործը, խմբագրութենից բոլորովին անկախ պատճառներով: Մեր օրագրի սկզբնաւորութեան հանդիպեցան բազմաթիւ արգելքներ, որոնց հարկաւոր էր յաղթել և յետոյ սկսել գործը: Այժմ մենք կարծում ենք ազատվելինք արգելքներից և կ'շարունակենք մեր գործը անդադար: Մենք հրատարակում ենք չորս №№ միասին, 1864 թուի նոյեմբեր, դեկտեմ-

(1) *Հայկեան Ներսիսեան ուսումնարանի տպարանը կողպված է վաղուց ուսումնարանի կառավարութեան անհոգատարութեան պատճառով:*

բեր և 1865 թուի յունվար և փետրվար ամիսների համար զանազան պատճառներով Գլխաւորապես ցանկալի էր մեզ հաւասարվել ժամանակի հետ և դոնէ այսուհետև հրատարակել օրագրիս տետրակները իւր ժամանակին։ Օրագրիս տարին, ինչպէս կարող էր նկատել ընթերցողը, սկսվելով 1864 թուի նոյեմբեր ամսից շարունակվելու է մինչև 1865 թուի նոյեմբեր ամիսը։

Օրագրիս 1 №-ի հետ ստանում էն բոլոր ստորագրողները հանդուցած Ներսէսի V-ի Հայերի Ծայրագոյն պատրիարգի և կաթողիկոսի Ֆօտօգրաֆիկական պատկերը ձրիաբար։

Օրագրիս խմբագրութիւնը վաղուց արդէն առաջարկել էր և խնդրել էր հայաբնակ քաղաքների մէջ հայազէտ անձներին նամակագրող լինել օրագրիս համար, գրելով տարու մէջ երկու — երեք նամակ տեղացի Հայերի, ուսումնարանների, հոգևորականութեան, և ընդհանրապէս հայկական կեանքի վերա տեղեկութիւններով։ Սորա փոխարէն մենք խոստացել էնք ուղարկել օրագրիս տարեկան տպագրութիւնը ձրի։ Այն մեծապատիւ անձներից, դէպի որոնք դարձել էինք մենք, մի քանիները միայն պատասխանեցին և յայտնեցին իւրեանց յօժարութիւնը։ Այս պատճառով մենք այն վերջիններին ենք ուղարկել մեր օրագիրը։ Ուրիշներին չենք ուղարկել, որովհետև յայտնի չէ մեզ — ընդունում էն արդեօք նոքա խմբագրութեան առաջարկված պայմանները թէ ոչ։ Այսով առաջարկում էնք յիշված պարոններին — յայտնել մեզ իւրեանց միտքը, համաձայն են արդեօք գրել նամակներ, որ և մենք կարողանանք իւր ժամանակին դոցա հասցնել օրագրիս №№; իսկ եթէ ոչ, մեզ հարկաւոր է դառնալ մեր խնդիրով դէպի ուրիշներ, որոնք կարողէին ընդունել մեր առաջարկութիւնը։

ԽՄԲԱԳՐՈՂ — ՏՆՕՐԻՆՈՂ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍՏԵՓԱՆԵ։

Дозволено цензурою. Тифлисъ, Марта, 30 1865 г.

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԸ։

Երկու խօսք դէպի ընթերցողը։ Ներսիսեան Հոգևոր ուսումնարանը, հին հոգաբարձուները, ծխական ուսումնարանները։ Մեր թէատրը. երկու խնդիր՝ ազգային ողբերգու թիւններն ու թարգմանած պիէսեքն ու հեղինակութիւնները։ Վանքի բոլորիչուրջը —Հայաստանի ամերակները։ Էջ տարվոյ քարոզները։ «Հիսխասփայլի» և «Համբաւաբերի» դաղարները։

Ի՞նչպէս հանդարտ հանդարտ անց են կենում մեր օրերը, ի՞նչպէս հանդարտ ու անհոգ մոխիկ ենք տալիս մեր ազգային գործերին։ Ի՞նչ ենք շտապում, էսօր — եղուց հօ չենք մեռնելու, պէտ ժամանակ շատ ունինք, հիմի չը լինի, յետոյ ուշք կը դարձնենք մեր ազգային գործերին։ Ամենքը տուս են կացել, համարեա թէ բոլոր ազգասէր Հայերը հենց հնդուր համար մէկ քանի անգամ ազգային տեղերում երևեցան, որ ստանան էլ դեղեցիկ «ազգասէր» անունը։

Բայց չենք ուզում մենք մեռած կոչվել։ Մենք մերը կասինք, կատարողը կուզէ կատարէ, կուզէ չէ։ Աքլորինը չը լինի, թէ ես կը կանչեմ, կուզէ լուսանայ, կուզէ չէ։ Թեպէտ մեր գրքածներին էլ ուշք դարձնող սակաւ կը լինի, թեպէտ մեր թերթերը շատերի մօտ անկարեւ կը լինան — մկների կերակուր, բայց մենք կաշխատենք դուրս գալ մեր պարտականութենից։ Համոզված ենք, որ ասելով էլի կարելիէ բան դառնայ, քանթէ չասելով։

Առաջին մեր խօսքը Ներսիսեան Հոգևոր ուսումնարանի վրայ է։ Էս ուսումնարանին մեծ նշանակութիւն ենք տալիս և մեր ազգային գործերից և ուսումնարաններից բարձր ենք համարում էն պատճառով, որ Ռուսաստանում սա է մէկ հատ ուսումնարան, որ կարողէ ազգային կոչվել (2)։

---

(1) Գաւառական բարբառով գրված յօդվածները, գլխաւորապէս Թիֆլիսի կեանքի ստորագրութիւնը, պիտի կազմեն միշտ առանձին տեսակ մեր օրագրի մէջ, ինչպէս այս անգամ։ *Խմբագ։*

(2) Հարկաւորէր առաւել պնդով բացատրել Ներսիսեան ուսումնարանի նշանաւորութիւնը։ Ներան չենումենք — և այսպէս պարտականանէ անել բոլոր ճշմարիտ Հայերը — մեր առաջին սրբազան հոգաբարութեան առարկա այն պատճառով, որ «կարողէ ազգային հոգևոր կոչվել ասումէ ալ, Թիֆլիսցի Հայն, այսինքն, ուսումնարանի պրոգրամովթոյլ տվված է սովորեցնել Հայկական Պատմութիւնը, ... Մեր մեծ անբաղդութեան համար այժմ Ներսիսեան ուսումնարանի

Հերու լացաւ էս ուսումնարանի հին հոգաբարձուների երկք տարին եւ էդ պատճառով տարվայ վերջը նշանակածէր նոր հոգաբարձուների ընտրութիւնը: Բայց մինչեւ նորերի ընտրելը միթէ ոչինչ պարտք չը կար հների վրայ:

Զէ՞ որ նոր կանոնադրութենով հոգաբարձուները պալատական հին տարինը մէկ անգամ հաշիւ տալ ժողովրդին: Անց կացաւ երկք տարին բոլորովին լուռ ու մունջ հին հոգաբարձուների կողմից: Զարմանալի բան: Եթէ հոգաբարձուները կարծում էին, թէ հայերիցը շատ սակաւ կը գտնվէին էնպիսի մարդիկ, որոնք ուսումնարանի վիճակի մասին տեղեկութիւն ստանալու համար դնացել էին ուսումնարան, գիտեա՞ ինչի՞ մէկ լրագրով չը հրատարակեցին հաշիւը, որ պարզ լինէր ամենքի համար մեր ուսումնարանի գործը: Զէ՞ թէ նրանք, հոգաբարձուները, ժողովրդի կողմից հաշիւ պահանջելուն պէտք է սպասեն, որ բոլորովին անկարելի է, այլ իրանք պէտք է յայտնեն ժողովրդին ուսումնարանի վիճակը: Ժողովրդի մեծ մասը, չը կրթվածները ոչինչ չեն պահանջի մեր ուսումնարանից: Էդպէս է ուրիշ երկիրներումն էլ: Միշտ ընտրած մարդիքն են ժողովրդին պատասխան տվողը նրան լաւն ու վատը հասկացնողը:

Նոր հոգաբարձուների ընտրութենին ներկայ գտնվեցանք մենք էլ: Բայց ի՞նչ ենք ասում, թէ ներկայ գտնվեցանք— չէ թէ հենց էն սենեակումն էինք, ուր որ ժողովված էին ժողովրդի պատգամաւորներն ու Առաջնորդը այլ դուրսը որովհետև... չէին թողնում էն սենեակը էն մարդկերանցը, որոնք պատգամաւոր չէին: Միթէ գոնեա էնքանը չէր կարելի անել, որ ցանկացողներին տուն էին թողել էն սենեակը հենց միայն լսելու, բոլորովին չը տալով նրանցը խօսելու եւ խորհուրդ անելու իրաւունք:

Էս ...առաջին տարիները, 1862-ին, 1863-ին լրագրով հրատարիվեցաւ ժողովուրդը ուսումնարանի աշակերտների հարցաքննութենին ներկայ գտնվելու, բայց հերու, 1864-ին էդ էլ

Ներկա կառավարութիւնը հնար չէ գտնում սովորեցնել Հայկական պատմութիւնը եւ Հայկական պատմութիւնը մնացել է Հայկական ուսումնարանի մէջ առանց ուսուցչի: Մենք վաղուց պատրաստել էինք անատոմ եւ բոլոր խղճով գրված յօդվածը Ներսիսեան ուսումնարանի մէջ քանի մի առարկաների դասատուութեան մասին մեր ընթերցողների համար, բայց խմբագրութենից անկախ պատճառով մեր յօդվածը մնում անտիպ:

Խմբագ.

չարին։ Մենք կարծում ենք աւելի 1864-թուին էր հարկաւոր քննութենին ժողովրդի հրաւիրելը, որովհետև էդ թուին լըրացաւ հին հոգաբարձուների երեք տարին։ Իրանց իրանց, ոնց որ ուզեցան քննութիւն արին, պրծան . . . . . .

. . . . . .

Ընտրվեցան նոր հոգաբարձունները և ահա չորս ամիսն է դնում, բայց դեռ բոլորովին տեղեկութիւն չունինք, թէ հաստատավեցան էն մարդիկը, չըհաստատվեցան. . . . . .

Փորձը ցոյց տվեց մեզ, որ տարերով Ներսէսի շինած հին ուսումնարանը, էն ահագին շինուածքը, բոլորովին ոչինչ արդիւնք չէ տալիս։ Էդ երբ-որ սիրուն շինութիւնն ու քաղաքիս զարդը հիմի քար ու քանդ արած . . . . . .

. . . . . կիսաւեր վիճակով մնացած է։ . . . Էդ տունը եթէ մեկ-մարդունը լինէր միթէ կը թողնվեր էսքան ժամանակ քար ու քանդ արած։ Եթէ բոլորովին չէ, գոնեա փոքր ինչ կարգի կը դնվեր և անպատճառ տարին 1000 մանեթից աւելի արդիւնք կը ստացվէր։ Բայց երևի քիչ են մտածում ուսումնարանի արդիւնքը շտացնելու համար։ . . . . . Աղդային կալուածների համար ոչով չէ հոգս քաշում էնպէս համար, որ էդ կալուածները մեկ մարդունը չեն, այլ մեկ անորոշ «աղգ» կոչվածինը. .

Աւելորդ ենք համարում մեր ուսումնարանի վրայ խօսելիս ասել և մեկ երկու խօսք մեր ծխական ուսումնարանների վրայ։

Ներսէսի կարգադրութենով հիմնված են էս ուսումնարանները իբր պատրաստական դասատուններ Ներսիսեան ուսումնարանի համար։ Էս ուսումնարանների վրայ հոգացողութիւն ունեցողները հոգաբարձունները պէտք է լինէին։ Բայց փորձը ցոյց տվեց մեզ, որ հոգաբարձունները Ներսիսեան ուսումնարանումը չափազանց զբաղված են և չեն կարողանում փոքր ուսումնարանների դործերով պարապել։ Էս ուսումնարանների վարժապետները ստանում են ամենքը 5 մ. — 24 դասի համար։ Ո՞վ լաւ է դաս տալիս, ո՞վ չէ, ո՞վ ի՞նչպէս է դաս տալիս, ո՞վ ի՞նչպէս . . . դաս են տալիս էլի՛ . . . . . .

Բայց վատ չէր լինի, որ մեր ծխական ուսումնարանները մեկ կառավարող ունենային ու հետեղի վարժապետների ռոճիկն էլ նշանակվեր ամենքը 15 մ., եթէ աւելին անկարելի լինի։ Ներսիսեան ուսումնարանի տեսուչը պէտք է ունենայ ծխական ու-

սուճիարանի համար կառավորող նշանակելու իրաւունքը, բայց էն պայմանով, որ էս կառավարողի գործերի քննելը տեսուչի վրայ լինի: Ծխական ուսուճիարանների կառավարողին հարկաւոր կը լինի նշանակել տարէկնը 500—600 մանէթ ռոճիկ:

Կասեն ի՞նչ առատ առատ ռոճիկներ էք բաժանում ամենին: Մեր պատասխանն էս է: Եթէ ուզում ենք, որ մեր ուսուճիարաններում ծառայողները բան շինեն և նրանցից հաշիւ պահանջելու ձար լինի, պէտք է նրանցն էնքան փող տանք, որ նրանք միայն էս գործով պարապեն ու չէ թէ հիմիկվայ պէս . . . .

Ուսուճիարանի վրայ էսքանն ասելուց յետոյ մէկ քանի խօսք ունինք ասելու և մեր թէատրի վրայ:

Կամենում ենք պատասխան տալ երկու խնդրին՝ ա, թէ մեր ժողովրդի համար հիմի ի՞նչպիսի ազգային ողբերգութիւններ պէտք է խաղացվին և բ, հիմի մեզ թարգմանած պիեսներն են հարկաւոր, թէ հեղինակութիւնները:

Մեր ժողովրդի պէս ժողովրդի համար պէտք է խաղացվին ազգային ողբերգութիւններ, որովհետև մեր անկիրթ ժողովուրդը պէտք է հնուին ապրի և հպարտանայ իրա առաջվան ազգային հերոսներով, երևելի մարդկերանցով: Բայց բանն էն է, որ մեր ժողովրդին ցոյց տված հերոսները պէտք է լինեն հայ հերոսներ ու ոչ թէ էնպէսիներ, որոնց դուրս էին բերում հերու մեր բեմի վրայ իբր հայ հերոսներ, բայց էնպէս աղաւաղած էր գաղափարը, որ ով է իմանում ոչ մէկ ժամանակ չէին էլել հայ աստանումը էն հերոսները, որոնց դուրս էին բերում հերոսները: Մեզ հարկաւոր են հայ հերոսներ . . . . . Որովհետև ազգային ողբերգութիւնները անկիրթ ժողովրդի համար են նշանակած, էսդուբ համար էլ ամենահասկանալի պարզ լեզուով պէտք է լինեն գրած: Ի՞նչպէս կարելի է հերուայ պէս խրթին գրաբար լեզուով գրած բան խաղալ ժողովրդի համար, որ մեր կրթված ժողովուրդն էլ մեծ դժուարութենով էր հասկանում էն լեզուն:

Պէտք է թարգմանե՞նք, թէ պէտք է շարադրե՞նք հիմի կատակերգութիւններ:

Մեր կարծիքով հիմի, գործի սկզբումը, դեռ մեզ համար էն ժամանակն է, որ միայն թարգմանած պիեսները պէտք է խաղացվին: Ի՞նչպէս կարելի է սկսել յանկարծ վերջինը, կատա-

բանալիը։ Դեռ թարգմանենք, կարդանք, սովորենք, բան տես-նենք, յետոյ թէ շնորհք ունենք շարադրենք էլ։

Սխալ է էն կարծիքը, թէ իբր մեր ազգի կեանքը չի երևի թարգմանած պիեսների մէջը։ Ղորդ է չի երևի, եթէ էնպիսի պիեսեր թարգմանվեն, որոնց մէջը մեր կեանքին նման բան չը լինի։ Մեծ զգուշութեամբ պէտք է ընտրվեն թարգմանելու պիեսերը։ Բայց էս էլ պէտք է ասվի, որ պիեսեր թարգմա-նելն ու շարադրելը ամեն մարդու գործ չէ։ Ես խօսքերը լաւ պէտք է իմանան նրանք, ում համար էլ ասվում են հիմի։

Չենք կարողանում մոռանալ էս մեկ քանի ամիս առաջ Մոս-կովի ուսանողից ստացած նամակը, որի մէջը նա ասում է, թէ իբր Մոսկովումը հաճախ է դնացել Թիֆլիսից, որ մեզանումը ամեն գիր գիտացող պիեսեր է գրում։ Սխալ էլ չէ։ Տէղիք ունէ ձեր իմացած համբաւը, Մոսկովեցիք, մեր պիեսեր գրող-ների վրայ։ Ընդհակի տղերքն ենմեզանումը պիեսեր շարադրում ու թարգմանում, որոնք հայերէն երկու տող չեն կարող կա-նոնաւոր գրել։ Մինչև անգամ երեխերքն էլ են մեզանումը պիես-սեր շարադրում ու խաղում ժողովրդի համար։ Ի՞նչպէս առաջ է գնում մեր ազգը զարմանալի քայլերով . . . . . .

. . . . . .

Մեր թէատրի վրայ խօսելիս կը կամենան իմանալ շատե-րը, թէ էլի կունենանք թէատր, թէ չէ։ Պ. Զմշկեանցը և նրա ընկերները խոստանում են շարունակել էս գործը։ Աստ-ուած տայ։

Բայց էս ինչ զարմանում, թէ ի՞նչ էլան մեր թէատրի հերուան 12 հոգաբարձուները։ Ո՞ւր են, ինչի՞ էլ չեն երևում։

. . . . . .

. . . . . .

Սրտներս չէ համբերում, չենք կարող չասել մեկ քանի խօսք և հին ներսիսեան ուսումնարանի դէմն էլած տների վրայ և առ հասարակ վանքի բոլորի շուրջն էլած տեղերի վրայ։

Հին ուսումնարանի դէմը կար հին տներ, որոնցից բաւա-կան փող էր ստացվում։ Հերու քանդեցին էն տները էն մըտ-քով, որ նորերը շինվի, բայց մինչև հիմի մնում են քար ու քանդ։ Ով որ ուզում է հիմիկուան Հայաստանի ա-ւերակների վրայ փոքր ինչ հասկացողութիւն ունենայ, նրան խորհուրդ կը տանք, որ անց կենայ վանքի մօտ քար ու քանդ

սրած տների առաջը (1): . . . . . .
. . . . . .

Ողջ քաղաքը համարեա թէ քարվեցաւ, ցխէին ազատվեցաւ, բայց վանքի պէս մայր եկեղեցին չէ ուզում իր բոլորի շուրջը քարել: Թող ասում են .... եթէ հայերը ջերմեռանդ են, ցխումն էլ կը դան աղօթք անելու:

Էս անգամով մեր խօսքը վերջացնելուց առաջ չենք կամենում մոռանալ և էս տարվայ մեծ պատի քարոզները: Համարեա թէ մեր քաղաքի բոլոր եկեղեցիներում քարոզ են ասում ամեն տեղ իրանց քահաներից մէկը: Վանքումը վարդապետն էր ասում Առաջնորդի հիւանդութենի պատճառով: Մենք ներկայ ենք գտնվել մէկ քանի եկեղեցու քարոզներում:
. . . . . .

Ափսոս որ մէկ քանի տեղ քարոզները խրթին դրաբար էր ո՛ժողովրդին դժուար հասկանալի: Քարոզի արժանաւորութիւնն աւելի կը լինի, եթէ ժողովրդի լեզուով ասվի և ոչ թէ դրաբար:

Յոյս կայ որ մեր աստծներից գոնեա մէկը պատշաճու հոգի վրայ ընկնի և բան դառնայ . . . . . .

Էս անգամով իբր լուր հաղորդում ենք մեր ընթերցողներին, որ բազմաշխատ «Հիւսիսափայլ» Մոսկովի հայերէն օրագիրը էլ չէ շարունակվելու: Միևնոյն լուրը լսեցինք և «Համբաւաբերի» մասին:

Էդպէս է, հայերի մէջ երկար չեն շարունակվում օրագիրները...

ԹԻՖԼԻՍԵՑԻ ՀԱՑ:

1865, մարտի 20;

---

(1) Հայկական Ներսիսեան ուսումնարանին կարելի է այժմ գոնէ չինութեան անուն տալ: Երբ պ. Յովհաննիսեանին Նորին Վեհափառութեան սրբազնագոյն Կոնդակով նշանակվեցաւ ուսումնարանի տեսուչ, մեծ աղաստիս գօկտօրը, խորհրդակցելով ուսումնարանի հոգաբարձութեան և պ. Գ. Խմիրեանի հետ և օգնութեան ձեռը տալով միմեանց, ինչպէս լսել ենք, սկսեցին մաքրել հին ուսումնարանը և չինել: Գործը սկսվեցաւ Թիֆլիսի հայերի ամենամեծ ուրախութեան համար, բայց չկարողացաւ երկար շարունակվել, ինչպէս երևում է, և ուսումնարանի չինութեան գործը կանգնեցաւ Թիֆլիսի հայերի ամենամեծ տհաճութեան համար . . . .

Խմբագ:

Дозволено цензурою. Тифлисъ Марта, 30 1865 г.

37 երեսի վերա, վերևից երկրորդ տողում «զրկված են եղել» խօսքից յետոյ պակաս է հետևեալը. " Ա.յսպէս փոքր առ փոքր քաղաքակրթութիւնը առաջ է գնում իբր սանդուխտով Եւրոպայից դէպի Ասիա, և իհարկէ նա չէ կարող չ'ունենալ մի օր բաղդատուր ազդեցութիւն այն աշխարհների բնակիչների վերա, որտեղ նա կը տարածվի։ ,,

66 երեսի վերա ներքևից երկրորդ տողում «գոչողների» բառի փոխանակ հարկաւոր է կարդալ «անբաղդների» բառը։

79 երեսի վերա դրամախնդրող անձնների թիւի մէջ հարկաւոր է աւելացնել մի 13 անձը «Վասիլ Գող Հայաստանից»։

100 երեսի վերա ներքևից 9 տողում «կեանքի պատմութիւնը» խօսքից յետոյ պակաս է հետևեալը. «ինչպէս արդար է այն դէմքը, ինչպիսի խորին և նշմարելի գծերով նկարված են այն դէմքի վերա վերջին մտածութիւնը, վերջին զգացմունքը, վերջին յոյսը.»

112 երեսի վերա ներքևից առաջին տողում պակաս է հետևեալը. «պ. Քանանովի յօդվածը Հայերէն թարգմանված տպվեցաւ Մասեաց Աղաւնի օրագրի, 1864 թուի, յունիսի և յուլիսի №№ -ի մէջ։

53 երեսի վերա Յանուար. մէջ ներքևից առաջին տողում փոխանակ «պատրաստ ենք նոցա տալու հնարներ», հարկաւոր է կարդալ. «պատրաստ ենք նոցա ցոյց տալու հնարներ»։

---

(1) Այստեղ նշանակված են խմբագրութենից նկատված լրիվական սխալները միայն։

Մեր Օրագրի մէջ հանդիպած բոլոր անատորագիր յօդուածները թէ թարգմանական և թէ բնագրական պէտք է համարել միշտ Խմբագրութեան աշխատութիւն և սեփականութիւն։

Կաթողիկոս Ղևոնդեան V-դի ֆոտոգրաֆիկական պատկերները վաճառվումեն և ցանկացողները կարող են դառնալ կամ օրագրիս Խմբագրատան կամ պ. Ա. Էնֆիաճեանի գրավաճառանոցում, վճարելով իւրաքանչիւրի համար 40 կոպէկ։

Հրատարակող Ճեռամէ պ. Հ. Էնֆիաճեանցը։

Մի օրագիրը հրատարակվելու է ամիս միանգամ, տարին 12 տետրակներ: Իւրաքանչիւր տետրակի թերթերի թիւը նշանակվում է 2-ից 3 (24 30 թերթ տարու մէջ):

Օրագրիս տարեկան գինը ճանապարհի ծախսով և տան մէջ հասուցմամբ է 5 մանէթ:

Օրագրիս ստորագրութիւնը ընդունվում է Թիֆլիսի մէջ Խմբագրատան և պ. Աւետիք Էնֆիաճեանի գրավաճառանոցում:

Տարաքաղաքացիները պիտի հասցնեն իւրեանց պահանջմունք յատկապէս միայն Խմբագրողին այս հասցէով: Степану Артемевичу Степане. Въ Тифлисъ. Въ Редакцію армянскаго Журнала «Журавль Арменіи».